



Շնորհալիր Ամենայն Սուրբ Օրհնակ
 «Ողջուն ընդ քեզ, Նոր տարի, լիցի պաշտատ քո բարի, եւ արգասիքս լիաճոց»
 Դ. Ալիշան

Իրանի դեսպանը հրաժեշտ տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Շարյազայի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալիոնեզ Հադիյանին։

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նկատեց, որ երկու երկրների միջև փոխհարա-

բերությունները բոլոր ոլորտներում զարգացում են ապրում՝ դրանում կարևորելով նաեւ դեսպանատան դերը։ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ Հայաստանին բերած իր նպաստի եւ արդյունավոր ծառայության համար։

Հանդիպմանը խոսվեց նաեւ երկու ժողովուրդների պատմամշակութային առնչությունների, ներկայիս բարիդրացական սերտ հարաբերությունների եւ տնտեսական համագործակցության մասին։

Սարկվազական ձեռնարկություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Սբ Ստեփանոս Նախավայելի եւ առաջին վարդապետի տոնը։ Մատուցվեց Սբ Պատարագ։ Հիշթացս Սբ Պատարագի, ձեռնարկ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի լուսավորապետ Արարատ եպս Գալթազյանի, սարկվազական աստիճան ստացավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի 23 ասն, ովքեր հաջորդությամբ հանձնել էին սարկվազական քննությունները։

Արարատ սրբազանը նորընծա սարկվազներին ուղղված իր պատգամում ասաց. «...Սիրելի՛ սարկվազներ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ հատկապես Մայր Աթոռ Սբ Էջմիածնի այս խորանը վկայ են եղել բազում ու բազմաթիվ հոգեւորականների ձեռնարկության. կաթողիկոսներն այս խորանի վրա են ծնկադն ստացել իրենց հայրապետական օծումը, բազում եպիսկոպոսներ, կուսակրոն ու ամուսնացյալ բախաններ ու սարկվազներ տալովսին հին ժամանակներից՝ Գրիգոր Լուսավորչի օրերից մինչեւ այսօր, ստացել են իրենց ձեռնարկությունն ու օծումը։ Այսօր ձեզ է վիճակվել հետեւել մեր լուսավորչի Նախորդներին»։ Սրբազան հայրը նաեւ հորորդեց. «Այս է պահանջում Աստված, այս է պահանջում յուրաքանչյուր հավատացյալ, որ հոգեւորա-

կանը, հովիվը, անկախ իր աստիճանից ու պաշտոնից, նախ պետք է տա, պետք է գոհաբերի եւ ծառայի նրանց, ովքեր կարիքն ունեն այդ սպասավորության։

Պատարագից հետո սարկվազների վեհարանում ընդունեց եւ իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նորին Սրբությունը, տոնի առիթով շնորհավորելով սարկվազներին, իր ուրախությունը հայտնեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում սարկվազաց դասը համալրվեց եւ 23 հոգով, եւ հորորդեց առավել նախաձեռնողությամբ ու ջանասիրությամբ լծվել իրենց առաքելության իրականացմանը՝ աջքի առաջ միշտ ունենալով սբ Ստեփանոսի օրհնակը, եւ իրենց ողջ ջանքերն ի սպաս դնել ի պայծառություն եւ ի շինություն մեր ժողովրդի ու Եկեղեցու։ Վերջում Նորին Սրբությունն ամենքին նվերներ հանձնեց։


Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր տաճարում տեղի ունեցավ նաեւ դպիրների եւ ուրարակիրների ձեռնարկություն։ Հայրության աստիճան ստացան Գեորգյան հոգեւոր ճեմարանի երկրորդ եւ երրորդ լսարանի սաները, չորրորդ լսարանի ճեմարանականներն արժանացան ուրարակության պատվի։

Կասարվեց Երեւանի Աջափնյակ համայնքի եկեղեցու հիմնարկերը

Դեկտեմբերի 22-ին Երեւանի Աջափնյակ համայնքում Ն. Ս. Օ. Ս. Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսատեսությամբ կատարվեց Սբ Խաչ եկեղեցու հիմնարկերի արարողությունը։ Եկեղեցին կառուցվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ։ Եկեղեցու ճարտարապետն է Ռուբեն Ազատյանը։

Ձեռնարկ Ամենայն Հայոց Հայրապետի եւ արարողության մասնակցից Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կոնյանի, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս եպս Ներսիսյանի եւ Մայր Աթոռի լուսավորապետ Արարատ եպս Գալթազյանի օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը։ Այս եկեղեցու կնքահայրերը վեմ քարերը գետեղեցին եկեղեցու հիմքերում։

Կառուցվող եկեղեցու կնքահայրերն էին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Երվանդ Չախաթյանը, ՀՀ վարչապետի խորհրդական Ֆադեյ Սարգսյանը, ՀՀ գլխավոր դատախազ Արվակ Յովսեփյանը, ՀՀ ԱԺ պատգամավորներ Գալուստ Սահակյանը, Սամվել Ալեքսանյանը, Արման Սահակյանը, ՀՀ ԱԳ փոխնախարար Գեորգ Ղարիբջանյանը, ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանը, տիարք Ռազմիկ Աբրահամյանը, Կրեմ Մարկոսյանը, Ռուբեն Տոնոյանը, Հակոբ Հակոբյանը, Ռաֆիկ Կարապետյանը, Աջափնյակ համայնքի թաղապետ Ռուբեն Յովսեփյանը եւ բնցքամարտի իր թղթը Աբրահամը։



խանձանիդի լինել հայրենական իր ավանդների, սրբությունների պահպանման գործում եւ իր կյանքն ապրել Տիրոջ պատգամների ու պատվիրանների համաձայն։

Արդարեւ, մարդու կյանքն արժեքավորվում է իմաստ եւ ձեռք բերում, երբ անհատն այդ կյանքն ապրում է Աստուծո հետ։ Ներքե մեր պատմությունից գիտենք բարի օրինակներ, թե ինչպես են մեր հայրերն ապրել՝ իրենց կյանքը դարձնելով ամբողջական նվիրում երկրային Տիրոջը, ապրել են Քրիստոսի սուրբ հավատով՝ չզղանալով անգամ հարկ եղած դեպքում արյուն հեղել ի պաշտպանություն իրենց հավատքի ու սրբությունների»,- մասնավորապես ասաց Նորին Սրբությունը։

Վեհափառ Հայրապետը իր ղեկն ՀՀ վարչապետի շնորհակալություն հայտնեց ՀՀ իշխանությանը, որոնց ջարդացած ու վերաբերմունքը շնորհիվ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կարողանում է շնացնել հայոց հոգեւոր կյանքը, հիմնել եւ վերանորոգել վանքեր ու եկեղեցիներ, որոնց կամարների ներքո հայոց ազգն ամրացնում ու գորացնում է իր ոգին եւ աստվածապաշտությանը ընթանում դեպի իր կյանքի Նոր ժամանակները։

Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքն արտահայտեց Աջափնյակի թաղապետ Ռուբեն Յովսեփյանի եւ Աջափնյակի հավատավոր բոլոր բնակիչներին, որոնց նախաձեռնողի ջանքերով պիտի կառուցվի Սբ Խաչ եկեղեցին՝ գոթականությամբ, օրհնությամբ եւ հովանավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի։ Վեհափառն իր գնահատանքը բերեց նաեւ եկեղեցու ճարտարապետին ու շինարարներին։

Եկեղեցու կառուցումը նախատեսվում է ավարտել երեք տարուց։ Եկեղեցին կունենա 34 մետր բարձրություն եւ սյունաշարով լայն զմբեթ։



Արարողության ավարտին Նավասարդ սրբազանը ընթերցեց եկեղեցու հիմքի մեջ գետեղվելիք արձանագրությունը։ Այնուհետեւ հավաքված ժողովրդին եւ եկեղեցու կնքահայրերին հայրապետական իր պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ «Այսօր ձեզ հետ միասին մենք գահաճանական արդթըրվ եւ սարկվազություն կատարեցինք հիմնարկները Սբ Խաչ եկեղեցու, որ պիտի երկինք պարզի իր խաչը Հայոց աշխարհի եւ մեր բարեպաշտ ու հավատավոր զավակների վրա, որպեսզի ազգս հայոց շարունակի իր հավատարիմ ընթացքն առ Աստված, շարունակի նա-

Գեորգյան հոգեւոր ճեմարանի նորանշանակ սեւուչ Սահակ վրդ. ՄԱՇԱԼՅԱՆԻ ԲԱՐՈՂՐ՝ Խոսված Սբ Էջմիածնի Սայր Տաճարում

(16 դեկտեմբերի 2007 թ., փոխադրություն արեւմտահայերենից)

«Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք»:

Ղուկ., ԺԷ 10

Ինչպես մեր օրերում, սիրելի՛ հավատացյալներ, Տիրոջ երկրային ժամանակներում եւս մարդիկ դժգոհ էին, որ աշխարհը, կյանքը եւ Աստված բավականաչափ չեն գահաիտում իրենց: Իրենք շատ բան են արել ուրիշների համար, բայց միշտ պարտախտության հանդիպել: Եղել են խիստ հավատացյալ, շատ են աղոթել, ծոմ պահել, բայց Աստված պետք եղածին պես երբեք չի վարձատրել իրենց:

Տեր Յիսուսն անշուշտ լսում էր այս խոսքերը, ուստի եւ մի առակ պատմեց: Ասաց. «Իսկ ձեզանից ո՛վ, որ հողագործ կամ հովիվ ծառա ունի, երբ սա ազարակից տուն մտնի, նրան կասի իսկույն՝ «Անցի՛ր սեղան նստի՛ր, այլ նրան չի՛ ասի»: «Պատրաստի՛ր, ինչը ընթրիելու եմ, եւ գոտի կապած՝ ծառայի՛ր ինձ, մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ ապա կուտես եւ կխմես դու»: Միթե տերը շնորհապաշտ կլինի այդ ծառային, որ իր բոլոր հրամանները կատարեց»: Տեր Յիսուսն ասաց՝ չեմ կարծում: «Նույնպես եւ դուք»: ասաց Նա.՝ երբ կատարեք այն եղբայրներ, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե՛ «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ., ԺԷ 7-10):

Սակայն այս հարցն ավելի խորն է, թերեւս, մեր կյանքի ամենից խորին հարցն է, հարցը նաեւ մարդկային քաղաքակրթության, որով հետեւ ինչը ուսումնում եւ դոկտրինային ձեռնարկը, ինչից դժգոհ եւ կյանքում՝ որպէս անհատ, որպէս ազգ, որպէս մարդ, անպայման որեւէ մեկի ծառայության հետեւանքով: Մենք շատ ենք սիրում մեր ծառ. երբ մեկն էս լինում, եւ մեր առջեւ թուրք ու մատիտ կա, մեր անուններն ենք գրում, մեր ստորագրու-

թյունն ենք դնում: Երբ այցելեք հուշարձաններ, կոտետեք, որ շատերը որանց պատերին իրենց ու իրենց սիրելիների անուններն են թողել: Աշխարհի բոլոր լեզուներում ամենաշատ օգտագործվող բառը ո՛րն է՝ Ես-ը. Ես, Ես: Ուրեմն՝ պետք չէ զարմանալ: Մեր շուրջը դառնանք ու տեսնենք, թե որքան դժբախտություններ կան. դրանք այդ ծառի ընդթափումն են, կոկիվ, այս աշխարհի պատմությունը: Ինչո՞ւ է այդպես: Դրան, թերեւս, մի փոքր հոգեբանորեն պետք է մոտենալ: Երբ մենք մեր կյանքն սկսեցինք, մանուկ էինք, երեխա, եւ դա մեր կյանքի ամենից տկար օրերն էին, բաձակ ուրիշից կախման մեջ էինք: Մեզ գրկում էին, համբուրում, ծծում, բարկանում մեզ վրա, մեր ձեռքից քաշում-տանում էին ուր կամենում էին: Եվ մեր ծառ հենց այդ օրերից սկսեց լցվել բարկությամբ, որն այսօր էլ դեռես չենք գիտակցում: Ֆրեյդըն ասում է, որ այդ բարկությունը մարդու մեջ կա նույնիսկ մոր ու հոր հանդեպ: Մարդը մշտապես ունի մի ձգտում՝ մեծ մարդ լինելու, մանուկ չլինելու, այստեղ-այնտեղ չխնձրվելու, եզակի լինելու ձգտումը: Մեծ մարդ պետք է լինենք, որ մեր անունն ամեն ոք իմանա, ուրիշներից վեր պետք է լինենք, որովհետեւ արժանի ենք: Եվ երբ մեծանում ենք այս գզգզումներով, հետո էլ չենք հասկանում, թե ինչո՞ւ են այս ձգտումները կառավարում մեզ:

Մեկ այլ առակ պատմում է մեզ, թե ինչպե՞ս մի 18 տարեկան երիտասարդ գնում է հոր մոտ ու ասում.

« Դայրի՛կ, ես մեծ մարդ պետք է դառնամ, քեզ ու ընտանիքիս մեծ պատիվ պիտի բերեմ: Ինձ մի քիչ դրամ տուր, ես քաղաք եմ ուղևորվում »:

Հայրը տալիս է դրամը, եւ տղան գնում է քաղաք: Տեսնում է, որ այստեղ մեծ մարդ են ասում հարուստներին, եւ սկսում է իր ողջ ուժով, հնարամտությամբ հարստանալ, դրամը դրամի վրա դիզելով՝ ինչը տարի հետո դառնում է քաղաքի ամենահարուստներից մեկը: Մեծ-մեծ նվերներով իր հայրական տունն է վերադառնում եւ ժամերով պատմում, թե



ինչպես հարստացավ, ինչ խաղեր խաղաց եւ ի վերջո հարցնում.

« Դայրի՛կ, ինչպես որ ասել էի՝ մեծ մարդ դարձա՞մ »:

Հայրն ասում է, թե ինչո՞ւ է իրեն հարցնում, եթե ուրիշները նրան մեծ մարդ են ասում՝ մեծ մարդ է:

« Ե՛, ասում է որդին, - քո կարծիքն է ինձ համար կարեւոր. մեծ մարդ դարձա՞մ »: Հայրն ասում է.

« Ըստ ինձ՝ դու հարուստ մարդ ես, բայց մեծ մարդ չես »:

« Լա՛վ, - ասում է որդին, - իսկ ի՞նչն է պակասում »:

« Ես չեմ կարող ասել, դու ինչը պետք է գտնես այն: Զանի դեռ ինքը չես գտել, ուրիշի ասածն անգամ հասկանալ չես կարող »:

Տղան տխուր վերադառնում է եւ խորհում, որ իրավաբան է հայրը, ինքը դրամ ունի, բայց գիտություն չունի: Եվ Նշանավոր ուսուցիչներ է վարձում, հաճախում համալսարաններ, գիտություն ձեռք բերում, գրքեր է գրում, գրած գրքերը հատոր-հատոր բերում եւ հոր

սեղանին դնում.

« Լայի՛ր, հայ՛ր, ամբողջ աշխարհը գիտի, որ ես մեծ գիտնական եմ: Հիմա էլ պիտի՛ ասես, որ ես մեծ մարդ չեմ »:

Հայրն ասում է.

« Դարուստ մարդ ես, գիտուն մարդ ես, բայց մեծ մարդ չես »:

Տխրում է որդին ու կրկին մտածում, թե ինչն է պակասում: Խորհում է, որ քաղաքական ուժ չունի, որովհետեւ քաղաքականությամբ զբաղվողներն են աշխարհը կառավարում, եւ ամենից շատ նրանց անուններն են ինչում: Մուտք է գործում պալատ, դառնում թագավորի սիրելին, սովորում գինավորական արվեստն ու բանակի գլուխն անցած՝ հաղթանակներ տանում: Մի օր էլ՝ մեկ այլ երկիր գրավելուց հետո, վերադարձին՝ ճերմակ ծիւստած, իր բանակով, հորն է ներկայանում եւ պատմում, թե այդ հինգ տարիների ընթացքում քանի երկիր է գրավել, որքան գե-րիներ է վերցրել եւ դարձել երկրի երկրորդ դեմքը:

« Հիմա՛՛ էլ պիտի ասես, հայ՛ր, որ մեծ մարդ չեմ դարձել: Անունն չիմացող մեկը չկա »:

Հայրն ասում է.

« Տղա՛ն, հարուստ մարդ ես, գիտուն մարդ ես, զորավոր մարդ ես, բայց մեծ մարդ չես »:

« Հիմա՛՛ ի՞նչն է պակասում, - բարկանում է որդին, ձեռքը սեղանին խփում եւ դուրս թռչում տնից »:

Նստում է ձին ու խելթորեն սլանում մինչեւ որ հոգնում է: Իշխում է ձիուց, խստերի վրա պառկում ու լաց է լինում, թե ինչու այսքան հաջողություններից հետո հայրն իրեն մեծ մարդ չի համարում: Զուլ է մտնում: Երեկոյան արթնանում է եւ տեսնում, որ քիչ հեռավոր մի փոքրիկ տուն կա, պարտեզում խաղում են մանուկները, տարեցները նստած են, իսկ տանտիրուհին սեղան է գցում: Խորհում է, թե ինչ երջանիկ տեսարան է, թե ինչ ուրախ են այս մարդիկ՝ փոքրիկ այս տան մեջ: Մեկ էլ հեռվից նկատում է, որ հինգ ձիավոր են մոտենում տանը, ավազակներ են: Եվ հասկանում է, որ հարձակվելու են տան վրա՝ կողոպտելու: Տու՛ն պիտի այրեն, սրի բաշեն մարդկանց, մանուկներին փախցնեն եւ այդ դրախտային տեսարանը վերածեն դժոխքի: Անմիջապես նստում է ձին ու գնում օգնություն մեծ-մեծա՛կ՝ հիկնի դեմ: Նրանցից ուսման վիրավորվում են: Գողթը վախկոտ են լինում, եւ տեսնելով, որ դիմացինը լուրջ մեկն է, փախչում են: Եվ երբ տեսնեցինք երախտագիտության մոտենում են՝ իրենց ընտանիքայինը հայտնելու, նա ըջում է իր ձին ու հեռանում:

Շարունակությունը՝ էջ 4

ՆՈՐ ԻՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Սբ Գրիգոր Նյուսացի.
«Քրիստոնեական»



Ի՞նչ: «Քրիստոնեականը» (ճառալագու մեծին քրիստոնեական)՝ Նյուսացու դավանաբանական գլխավոր եւ ծավալուն երկն է, որն ամփոփում է հեղինակի ուղղափառ վարդապետության հիմնարար սկզբունքների: Թարգմանվում է առաջին անգամ:

Ներսես Լամբրոնացի.
«Մեկնություն
Հավատամքի եւ
Հայր մերի»

Ներսես Լամբրոնացու «Մեկնություն Հավատամքի եւ Հայր մերի» աշխատության հրատարակու-




թյունը «Սուրբ Գրքի մեկնություններ» մատենաշարի երրորդ գիրքն է, որն աշխարհաբարի եւ վերածել Սեղա Ստամբուլյանի: Գիրքը հրատարակվել է հովանավորությամբ տեղի տիրին՝ Արմեն եւ Նունե Սարգսյանների:

Գիրքը մեծ արժեք ունի ինչպես հայ մեկնողական գրականության հետաքրքրվողներին եւ այն ուսումնասիրողներին, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների համար:

«Հայելի վարուց»

«Հայելի վարուց» բարոյախրատական պատմությունից ժողովածուն «Հոգեւոր ընթերցումներ» մատենաշարի չորրորդ գիրքն է, որը Զևարիկ Տեր-Ղափյանի աշխատասիրությունից աշխարհաբարի են վերածել Խահակ արքայադուռ Սյան, Ռուբեն արքայա Զարգարյան եւ Զևարիկ Տեր-Ղափյանը: Գիրքը հրատարակվել է հովանավորությամբ Արմեն եւ Նունե Սարգսյանների:

«Հայելի վարուց»-ը միջնադարյան բարոյախրատական գրությունների ժողովածու է: Ժողովածուի գրությունները ներդրումով են առակագրերին, քաղաքագրերին եւ վարչագրական գրքերին: Ժողովածուի իր ուղույն հետքն է թողել ուշ միջնադարի գեղարվեստական գրականության արձակում: Ժողովածուն մեծ հետաքրքրություն է օգտակարություն կարող եւ ներկայացնել ընթերցող լայն շրջանակների համար:



Սբ Կյուրեղ Երուսաղեմացի.
«Կոչումն
ընծայության»

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության» երկը «Շնորհաբանական եկեղեցու հայեր» մատենաշարի հերթական գիրքն է, որը հին հունարենից թարգմանվել է Սիմոն Կրկնաշարյանը: Գիրքը հրատարակվել է կրկին հովանավորությամբ Արմեն եւ Նունե Սարգսյանների:

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացու մատենագրական ժառանգության առանցքային աշխատությունը՝

«Կոչումն ընծայության» կամ «Յառազա երախտից» ճառերի ժողովածուն, կարեւորագույն աղբյուր է վաղ Քրիստոնեական եկեղեցու դավանանքի ու պաշտամունքի ուսումնասիրության համար:

«Կոչումն ընծայության»-ը հայերեն առաջին անգամ թարգմանվել է 5-րդ դ., իսկ տպագրվել՝ 1727 թ. Կոստանդնուպոլսում: Հայերեն թարգմանությունը պարունակել է 18 ճառ: Ներկա հրատարակության թարգմանությունը, որ կատարվել է քննադիր, ամբողջական եւ պարունակում է 23 ճառ:



ՄԱՅՐ ՍՈՐՈՒ ՄԵ ԵՏՄԱՍՏԻ
ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ԳՐԻԳՈՐ Է ԱՆԱԿԱՐՉԵՅԻ

(1293-1307)

Ստեփանոսի գերդյուռնից հետո կաթողիկոսի քննությունն չկատարվեց, քանի որ դա հավատարմի էր եղեկեայական կանոններին, եւ ազգային արմատապատկույթն ապահովում էր հարգել եւ ոչ թոյնալիկի անել գերդյուռնի մէջ գտնվող կաթողիկոսի պատիվը: Կաթողիկոսն չկար, սակայն հայաբազմաթիւ հօրերէր, ինչպէս Կոտակոսի իր Կոտակեցոյ օրոք, վարում էր Գրիգոր Մկաւրագեղի տախտակը: Սակայն Ստեփանոսի մահից հետո կաթողիկոսի քննությունը դարձած օրակարգի հարց: Զեյթուն թագավորը ծոլով գտմարեց եւ ձեռնարդել տվեց կաթողիկոսն Գրիգոր Մկաւրագեղեւ: Իրականում ծոլով, բաշիք ընկ իմաստով, չեղած է, պարզապէս համաբնած տախտակասնը կատարեցին հայրապետի ձեռնարդությունը: Լաւինամով թագավորին հաջողվեց կաթողիկոսական պառօ բարձրագէտ գուցէ եւ իննից էլ յարինամով Ե-



պակկուպոր, որը, եթե չլիներ Լեւոն թագավորի կամքը, վարդը բազմաթիվ կլիներ կաթողիկոսական աթոռին: Հստ եղյալն՝ արեւելյան եպիսկոպոսների կարծիքը հարցնող չեղավ, և մի տեսակ օրինական դաժմած տեղապահություն կատարած եպիսկոպոսի կաթողիկոսականք: Անշուշտ, Գրիգոր Անապատեցիին կարող մարդ էր, ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ գիտնական այր, եկեղեցասեր, հմուտ՝ հոյս և լառին դպրությունների մեջ: Հայկաթաւարն տիրապետում էր նաեւ ասորեւրեւնից, քանի որ, Գաւառուի հավաստմամբ, թաղաքնապետությունն էր կատարել ոչ միայն հուճարներից և լառիւրեւնից, այլեւ ասորեւրեւնից: Անշուշտ, ևս առաքինի կենցաղ ուներ, սակայն եկեղեցասիրության հարցում վարում էր ո՛չ հայոց եկեղեցու աւակառակական սկզբունքներից թաղաքաւանութունը: Մննդի վրայ հայտնի էր, չկայած չի բացառվում, որ Սսից լինէր: Ինչ վերաբերում է Մեծեղեցից մակաւանդ, ապա այն կապված է նրա աշակերտական շրջանը Մեծեղի անապատում անցկացնելու հետ: Դառնալով մակաւարդ կամ Մանաթարգ թաղաքի եպիսկոպոսը՝ նա այլուհետ տատանւմ էր Մակաւանդից մակաւանդ: Անհավանակի է մտնւմ նրան տրված Տուրքերիցաց մակաւանդը: Կոչվել է նաեւ երգեցող, Դոռոմ՝ օտարաբանականութայնը հարելու, Տորո՞ր պատարագի խորհրդի բաժանիչ ջուր խառնելու համար: Նա կաթողիկոս Շնուարդից հավանաբար 1293 թիկ ամուսնաց: Լրեւելյան եպիսկոպոսները նրա ընտրության դեմ գործնակալորեն չքմութուացան, թերեւ, Ստեփանոս Օրբելյանի կշռադառնված թաղաքաւանութայն պատճառով, քանի որ նա խիստ վառագավոր էր համարում կաթողիկոսութայն պատակաւորւմ: Այնուհանդերձ Սյուրպաց պատմիչը խիստ քննադատել է կաթողիկոսի որդեգրած ուղղութիւնը:

Դժվար է ասել, թե ինչն էր պատճառը, սակայն կաթողիկոսի մահից շատ չանցած՝ եպիսկոպոսները հաշտություն առաջարկեցին Հայոց թագավորությանը: Թերեւս դրա շարժառիթը Զեթուրայի սուլթանական իշխանության տիրանալն էր, որովհետեւ նա վախենում էր մայրաքաղաքից հեռանալ՝



հնարավոր ռազմաէությունների խուսափելու համար: Ուստի ամեն ինչ անցի՝ արտաքին համաժամարտությունների վերջ տալու համար: Եզիպատյան սկսված սովն է ժողովրդի կողմից դիտվում էր քրիստոնյաների դեմ բռնություններ կիրառելու պատճառով աստվածային պատուհան: Կողմերը շուտով համաժամարտության եկան: Կայեղը գիշեցին Շաքը, Ալմաշեն եւ Բեհենսի ամրոցը, իսկ այս նաեւ: Մարաշն ուսկ Գերմանեսեն, իսկ Եզիպատացիները վերագործին ավար տաճար՝ շայն Եկեղեցի սրբությունները, մասնավորապես Գրիգոր Լուսավորչի աջը, ուրիշ երկրներն Սիւ: Լուսավորչի այն դարձի հավանաբար տեղի ունեցավ 1294 թվ 1295 թվերին: Ինչ վերաբերում է Գրիգոր Անավարդեցուն, ապա նա հայրաքաղաքնաղող հաստատեց Սումս:

Իրեն ունեղ զգալով կաթողիկոսական արքով իր: Գրիգոր Անավարճեցին համաճեց Յեղով թազազանդին բանտից ազատել Կոստանդին Կոտակեցուն, քանի որ գտնուում էր, որ իր լեռ գործելու եղանակով էլ առանկին վտանգ չի ներկայացնի: Նա բանտարկությունից ազատվեց, բերեւ, ինչեւ 1293 թվին, այսինքն՝ Անավարճելու հայրապետանաւով տարաւ: Սկը է համատուով մատուցեցերի պահարանին վրա Կոտակեցուն թողաւ արծանագրութեւնը: Պահարանի սկզբում պահվում էր Իտալիայի Ալեքսանդր: իրա բաղաջի տնտ գտնվող Բոսլոյ Մերքադը ղյուղի Դոմինիկական վանքում, սակայն եւ տազազան հայտնվեց Սանկո Պետերբուրգով կայսերական թանգարանում: Կոտակեցուն թողաւ վեր իշխվալ արծանագրութեւնով 1883 թվին արժանացաւ է Լեյթենանտ գումարան գլխավորակով մասնակիցեցերի ունաղ լրորակց: Արծանագրութեւնը գրեւի Կոտակեցին Լեյթենանտի արժուցիչ որ շատ ետաւ

գտնվող Սվետայի վանքում էր: Նա նշանակվել էր Սվետայի առաջնորդ, որը պարզապես պատվավոր գերություն էր, քան որ նրան թույլ չուվեցին վերադառնալ հորին վանք: Հասկանալի էր հետաքրքիր է, որ Կուտուպեցին էր իշխում Կարթուկի-արմատագրության մեջ չի նշում կաթողիկոսի անունը, սակայն երկից իշխում էր Հեթումը, ինչը մտածել է տալիս, թե Կուտուպեցին ապստոռը, այսուամենայնիվ, առաջին հերթին եղել է թագավորը, սակայն, թերեւ, մնալով զգուշորոշված կամ գտնե համայնայնությամբ:

Անավարտեցին այլևս ազատ էր իր գործողությունների մեջ, որի արդյունքը եղավ ստրկահոգի ձեռով հաշվաբան ծեծելու ու ստրկությունները ներմուծող Հայոց եկեղեցի: Նա բաց գիտական էր, որ ուներ ընդդիմադիր եւ ոչ միայն արեւելյան եպիսկոպոսներ, այլեւ Կիլիկիայի բնակչության մեծ մասը, ուստի նորամուծությունների իրականացնում էր ժամանակ առ ժամանակ՝ փոքր չափաքանակներով: Նա իր ծրագրերը չէր իրականացնում էր կաթողիկոսարան եւ փորձում համակիրներ գտնել հոգեւորականների շրջանում: Նա համբերակալաստում էր, որ իր նորամուծությունների ընդունակաւ: Այդ պատճառով խուսափում էր հիւանաներ արձակելուց, ինչը պարզ հասկատում է այն բանի, որ Անավարտը կատարածները կամ մտածածները եկել էին ցական օրենքի կամ կանոնի ուժ չունենալ: Անավարտեցին հասկանում էր, որ կատարած նրա ոչինչ չարժէք, քանի որ եկեղեցական ժողովը որոշեց իր հաստատել: Իսկ ժողովապետն է չգտնարժէք:

Նախքան կաթողիկոսի լադիմանե գործողությունների անցնելը՝ մի քան խոսքով ակրդադանաբան Սոի ե Արքանքի կաթողիկոսությունների փոխիարքություններին: Կամեխալով հարդե հայրապետանոցի ե րուն Պայաստանի եպիսկոպոսների հակապոսությունները՝ կաթողիկոս օրինե տոյե Աթոմաարը՝ վերջանցելով Աթոմաարի աքորի մի քո դրվաբ քաադարադոն որ քրուրեց իր Սե ե լեան ժողուր: Աթոմաարի թույլ տոյեց անարգել վաւերի ու իշխանւթյունը: Աթոմաարում այդ ժամանակ կաթողիկոսե էին Մեթերի իշխանի որդիին Ստեփանոսը, Մոսեփանցիլ հետո՝ եղիշե Արաւելեին, այսուհետե՝ Մեթերիի միւս որդի Չաքարիան: Դե ո՞ր կաթողիկոսի օրոք քաադարադը հանկել, պարզ չէ: Հետագայում քաադարադը վերապահվեցե, ե Մեթփաղզոցի արաբը վարանցիլ ե անհետաւաթ եղաւ:

Շարունակությունը՝ էջ 5

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ռուբեն Աբրահամյանը XX դարի առաջին կեսի հին պարսկերենի եւ համեմատական լեզվաբանության նշանավոր գիտակներից է:

Տեղեք է 1881 թ. փետրվարի 9-ին Վայոց ձորի Վիշինի գյուղում։ Այգևանական կրթությունն ստացել է հոր՝ Թադևոս Աբրահամյանի մասնավոր դպրոցում։ 1893 թ. ընդունվել է Գեորգյան ճեմարան, ուսնաշարներով է նշանավոր հայա-բեր-մանկավարժներ Մ. Աբերյանին, Գ. Յովսեփյանին, Կ. Կոստանյանին, Ստ. Կանայանին, Կոմիտասին եւ այլոց։ 1899 թ. ավարտելով ճեմարանի դպրոցական բաժին՝ Աբրահամյանը ջանկացավ ուսումը շարունակել բաթրնազիոյ [խառնական բաժնում։ 1899-1906 թթ. նա սովորել է նախ Բաշկի, Կյա՝ Երեսնի գիմնազիաներում։ 1906 թ. ընդունվել է Կիևի համալսարանի պատմաբանական-ֆակուլտետը, որտեղ ետեղեք է համեմատական (եզվաբանության եւ սանսկրիտերենի դասընթացներ)։ Ուսումը շարունակել է Կապիցիգի եւ Ս. Զետերբորգի համալսարաններում։ Նրա վրա ճակատագրական ազդեցություն է թողել Ռուսական (եզվաբանական դպրոց, որի պատկանելի տպավորություններն սերտել է որոշել է իր ապագա աղետել (եզվաբանություն եւ երեսնի) համարում ընդունելու գործում կարեւոր նշանակություն է

ռնեցել այն հակազանաճը, իր համալսարանական իր ուսուցիչներն էին նշանակող լեզվաբաններն արդո՛ւն։ Բողոքն ուղ Կիւրոսէին, ա-լեքսեմիսկոյ Ա. Ս. Հայնստառլը ին ալանսավոր հայալցետ Ն. Մարթ։ Վերջինիս խորհրդով էլ համալսա-րանեակեան ավարտեական շարադ-րանքն է ընտրել «Սեւեանին Ավե-տարաքին հետազոտութիւնը» թե-ման։ Մինչ համալսարանական ա-վարտական վկայական ստանալը՝ Ռ. Աբրահամյանն արդեն իրավել է ստանալու Էջմիածնի Գեղարքայ ե-մանական վարդապետ կողմից՝ դա-տականելու առաջիկա ուսումնա-կան տարւմ։

1911 թ. օգոստոսին համալսարանական խոր ու բազմակողմանի խթանություն ստացած Ռ. Աբրահամյանն քննություն է հեմարալի տեսչության հրավերը և սեպտեմբերից սկսվում դասավանդել հաստատության զուգ բաժնիներում. դպրոցական բաժնում՝ ռուսաց լեզու, իսկ լատինական բաժնում՝ լեզվաբանություն և փիլիսոփայության առարկաները:

Ճնամարանն ու Էջմիածնական միջավայրը հոգեհարազատ էին Երիտասարդ մանկավարժին: Նա անմիջապես ներգրավվե է այստեղ տարվող գիտամանկավարժական աշխատանքների թոփուրդի մեջ: 1912 թ. սկզբներին Ս. Աբեղյանի, Գ. Էդիսյանի, Գ. Աթուռյանի հետ

ՌՈՒԲԵՆ ԹԱԴԵՎՈՍԻ ԱՐԱՅԱՄՅԱՆ
(1881-1951)



ընդգրկվել է «Արարատ» ամսագրի խմբագրական նոր կազմի մեջ («Արարատ», 1912, էջ 104): Այս հանդեսում է, որ սկսում է տպագրել լեզվաբանական իր առաջին առաջադասությունների արդյունքները («Ինչ է լեզվաբանությունը», անդ, 1912, էջ 156-169, «Ինչ կերպ հնարավոր է հայերենի գիտական ուսումնասիրությունը», անդ, էջ 364-377, «Ննդվարական լեզվախոսքը», անդ, էջ 464-468, «Յնդվորդական եւ հայ լեզվաբանության պատմությունը», անդ, էջ 496-719):

Էջմիածնական այս երկրորդ շրջանը, իրերի բերումով, Ռ. Աբրահամյանի համար եղավ կարճատև:

Սեկ տարի անց եւ տեղափոխվում է Թիֆլիս, որ լատիներէ եւ լեզվաբանութիւն եւ դասավանդում տեղի 3-րդ ուսակէս գիմնազիայում եւ Կանանց քարճրագրոյ դասընթացներում (հետագայում՝ Անդրկովկասի համալսարան)։ Թիֆլիսյան տարիներէի հետաքրքրություն եւ տառնում պէլէի հաճախաւի հանդիպելու ռուսացապետ Լ. Մառի հետ, որից էլ սովորում եւ ծանանակակց ցարպիւնէր։ Այս հակառակմանը թախտորոշ եղավ Ռ. Արքսիանյանի համար։ Գրաբլերէնը երբ համար ետագայում դարձավ երկրորդ մայրենի լեզուն, որով իր միակի հարգորդակցվում էր, այլեւ գրում եւ դասավանդում։

1919 թ. մայիսին Ղաչատուրի
Հանրապետության կառավարու
թյան որոշմամբ Երեստանի հիմ
նադրվելու էր համալսարան: Այդ
աշխատանքները կազմակերպելու
համար Հանրային կրթության նա
արվեստի նախարար Գ. Սեյիջ-Ղա
րաբյոյանի հրավերով 1919 թ. հու
նիսի 10-ին տեղեկվում է Համալսա
րանի հանձնաժողով, որի կազմ
մեջ ընդգրկվում է Նետ Բ. Արսիսա
մյանը («Երեստի համալսարան
1918-1920 թթ.» վավերագրերի ժո
ղովածը, Երեստ, 1995, էջ 67):
Հանձնաժողովի առաջնատեղին
դիրը բացվելիք համալսարանը դա

սախտակահան փորձառու կարգերով սպախովմէն են: Նախաբարի նույն զգակների հոկտեմբերի 28-ի հրամանագրով՝ «Անդրկովկասի համալսարանի դոցենտի պաշտոնակատարու Ռուբեն Արքահամյանը նշանակվում է Երեւանի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետի պրոֆեսոր-դոցենտ» («Երեւանի համալսարան, 1918-1920 թթ.» վավերագրերի ժողովածու, էջ 121): Մտաքին կիսամյակում եւս դասաւանդելու էր լեզվաբանութեան ներածութիւնը ստարկան, հունարեն եւ լատիներեն (անդ, էջ 76, հմմտ, էջ 200): Հատկանշական է, որ, ի շարք այլ նշանավոր դեմքերի, Ռ. Արքահամյանը համալսարանի բացման հանդիսութեան ժամանակ (31 հունվարի, 1920 թ.) ատենաբանել է ողջույնի խոսքով, որը տպագրւել է «Հայաստանի համալսարան» մելոյոյ տէր թերթում: Չափազանց կարեւորելով այս իրողութիւնը՝ ճառախոսելուց հոյու է հայտնել, որ կորցարեւ համալսարանին կիմակված է եւ մայլ ծանկնդիւնը, թայեւ եւ մասնազգիտական դեր, այն է՝ առաջ միջնորդութիւնը՝ ստեղծելով գիտնականների ցարդ բացակայող սովորակար:

Շարունակելի

Պետրոս 3ՈՎՅԱՆԻՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու,
դոցենտ

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նորանշանակ սեւուշ Սահակ վրդ. ՍԱՇԱԼՅԱՆԻ ԲԱՐՈՂՐ՝ Խոսված Սբ Էջմիածնի Մայր տաճարում



Սկզբը՝ էջ 2

Այս անդրադառնում է, որ վերադարձ է. թեւից արյուն է ծորում: Բայց զգում է, որ իր մեջ ինչ-որ բան փոխվում է. լուսավորվում է, կարծես (եւսերը, ծառերը, թռչուններն աւու՜մ են, որ «նա արդեն մեծ մարդ է դարձել, որովհետեւ կյանքում մեկ անգամ ինքն իրեն մոռացել են հիշել է, որ ուրիշներն էլ են ապրում այս աշխարհում, մի անգամ հրաժարվել է իր մեծությունից, իր կյանքից՝ հանուն ուրիշների կյանքի, հրաժարվել իր երջանկությունից՝ հանուն ուրիշների երջանկության»:

Տեր Զիտուն այս դասը 2000 տարի առաջ է տվել մեզ՝ ասելով. «Ձեզանից մեծը ձեր սպասավորը պիտի լինի: Ով իր անձը բարձրացնում է, կոտորակի, եւ ով խոնարհեցնում է իր անձը, կարճարձան» (Մատթ. ԻԳ 12) կամ՝ «Ով ուզում է իր անձը փրկել, այն կորցնի, եւ ով կորցնի, կգտնի այն» (Մատթ. ԺԶ, 25):

Սիրելիներ, եթե Աստված է մեզ մեծ համարում՝ մեծ ենք, իսկ եթե ո՛չ, ապա օվկիանոսի պղպաղակների պես ենք կյանքում: Օվկիանոսի պղպաղակները, եթե գիտակցություն ունենային, պիտի ա-

սեին՝ ես, եւ պիտի կարծեին, որ իրենք են տիեզերքի կենտրոնը: Բայց մենք գիտենք, որ հիմնական օվկիանոսն է: Պղպաղակները բարձրանում ու պայթում են: Հիրավի, մենք պղպաղակներ ենք. ինչ որ ունենք, Աստված է տվել մեզ: Պողոս առաքյալն ասում է, թե ով հպարտանում է, թող Տիրոջով հպարտանա եւ ոչ իրենով: Մեզանով հպարտանալու հարկ չկա, որովհետեւ ինչ ունենք, որ մերն է, Աստված է տվել, մեր ազգն է տվել, ընտանիքը, մեր ուսուցիչները, մեր եկեղեցին: Մեր վերցրածներն անհամեմատ շատ են, հետեւաբար, երբ որեւէ բանում հաջողվում ենք, որեւէ բան ստեղծում, չաւենք՝ ես արեցի, իրապագեցեք ինձ, եւ արեցի, անունս ոսկե տառերով գրեք պատմության մեջ: Ո՛չ, ողջ փառքը, կարողությունն ու արքայությունն Աստծոն է պատկանում... Մենք միայն պղպաղակներ ենք, որ հետո պիտի պայթեն, իսկ օվկիանոսը հավերժ է:

Սիրելիներ, չգիտեմ՝ նկատե՞լ եք, եկեղեցիների մեջ երբեմն եռանկյունի է պատկերված լինում, եւ այդ եռանկյունու մեջ՝ աչք, դա Սուրբ Երրորդության ամենատես

աչքն է: Այդ աչքը միշտ նայում է մեզ՝ թե՛ դրսից եւ թե՛ մեր ներսից՝ արտից: Եվ նա գիտի, թե մենք ինչպես պիտի օգտագործենք այն, ինչը տրված է մեզ: Աստված կամենում է, որ մենք որքան ցունք, բաշխենք, տանք, բաշխի դեռ կարող ենք, եւ դրանով հպարտանում: Այս աշխարհում չափում են մարդու մեծությունը, հարստությունը՝ իր ունեցվածքով, նրանով, թե որքան է դիզել այդ մարդը: Բայց մենք գնալու ենք մի այլ աշխարհի, այնտեղ տետրերը պիտի բացեն ու նայեն, թե մենք որքան ենք տվել, որքան ենք բաշխել, որքան բաժանել, որքան ենք մեր ես-ը փոքրացրել, որպեսզի Աստված մեծ դառնա, եկեղեցին մեծ դառնա, մեր հավատքը մեծ դառնա: Եկեք կրկնենք մեր հայրերի իմաստությունը. գնանք մեր հին վանքերն ու տեսնենք, որ շուրջն ամենուր գերեզմաններ են: Այդ քարերից յուրաքանչյուրի տակ մեկն է ապրում՝ առանց անուկի: Նրանք իրենց ողջ կյանքը ծառայեցել են Աստծուն եւ ազգին, հետո թաղվել են՝ ցանկանալով նույնիսկ, որ իրենց գերեզմանը պատկանողն լինի, եւ մարդիկ, դրանք կոխտնելով, գնան դեպի լույսը, դեպի հավատը:

Թող Աստված մեզ այս ընդարձակ սիրտը տա, օրհնի բոլորիդ, եւ ի գորու լինենք տեսելու, որ մեր ես-ն առանց Աստծո ես-ի, առանց ուրիշների ես-ի ոչինչ է, գազան է միայն, եւ որպեսզի այն իրեշտակ դառնա, փութանք ծառայության արվեստը սովորել: Թող Աստված մեզ հենց այդ ծառայության շնորհը պարգևի: Ամեն:

Վահագն Նավասարդյանի եւ Եղիշե Չարենցի մի ճակատագրական հանդիպումը

Սկզբը՝ թիվ 22,23

Կոմունիստ Զարենցի համոզմամբ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո իր բարեկամի հետ միասին արդեն «մեռած» էր նրա կուսակցությունը, եւ ինքն էլ մասնակցել է հուղարկավորությանը, անգամ մի բուռ հող է գցել նրա դագաղին՝ «հոգու հանգստության համար»:

Սհա ինչու է Զարենցը Վ. Նավասարդյանին անվանել Հանգուցյալ Դարոն կամ Դարոն Հանգուցյալ:

Նույնիսկ ամենասիրելի մեռելների թաղելու գաղափարը նոր չէր Զարենցի համար. այդ գաղափարն էր ընկած 1921-24 թթ. գրած «Երկրի Նահիր» պոեմական վեպի հիմքում, վեպ, որի վերջում՝ Կարսի անկումից հետո, իսպաղեմ Զիտունի հետ է համեմատվում Մազուրի Համուն: Իսկ կենդանի մարդկանց վրա մեռելների ծիծաղելու, երեսնայան «մի քանի տերտերների» ու գեղարցունքային քարոզների, Հայության հրաշքի հեգնական վկայակոչումներով այս նույն խնդիրն է արծարծել Զարենցը:

Գաղափարական տարբեր դիրքորոշումներ ունեցող բարեկամների բաղադր, որն սկսվում է երկուստեք սիրավի պայքարավորությամբ, ի վերջո վերածվում է քաղաքական սուր բանավեճի կամ գաղափարների կռիվի, ուր կողմերը, մասնավորապես Զարենցը, հետեւորակն երկայալի խոսքի մեջ կիրառում են երգծածակի տարբեր միջոցներ՝ մեղմ հուժկով, նուրբ հեգնանքից սկսած մինչեւ քաղաքական ամենասուր եւ անխնայ սատիրա: Բայց կարելուր այն է, որ նրանք պահպանում են փոխադարձ հարգանքն ու երբեմն էլ չեն զսպում պոռոկ-կարգող անթաղյալ սերը:

«Ինչպես աշխարհի ճորտերի բոլոր, Այնպես էլ գերի իմ հայրենիքի երկրից մի մաքուր, արեւի բոսոր Լոկ հոկուներեթյան հողերը տվին»

համոզմունքի տեր Զարենցը 1925 թ. ինչպես վեներական հանդիպման օրերին Ավ. Իսահանյանին էր ներկայացնում խորհրդային երկրի առաջնությունները եւ նրան Հայաստան վերադառնալու հորդոր կարողում, այնպես էլ, հասկանալի է, հեգնանքով պիտի ընդունել Կ. Նավասարդյանի՝ Հայաստանի ու Երեսնայի հանդեպ այդուր կարողուն, իր երկու տարյան Հայաստան վերադառնալու նրա հույս եւ բաղ-

ձանքը, ինչպես նաեւ ժողովրդին փրկելու համար իշխանությունը կամավոր զիջելու նրա բացատրությունները: Զարենցը դրանք պիտի հասկանար, ընդուներ ու խոստովաներ մի փոքր անց՝ 1930-ական թթ. ողբերգական օրերին:

Վառ երգերս՝ հղած կարմիր այգաբացին, Ողբ ու տրտուռը դարձան ու

փոխվեցին լացի, Եվ այնքա՛ն բորբ՝ հանկարծ անվերադարձ հանգավ


Անորդվելի հավատա դեպի գալիքն անգամ, Եվ ինձ խոցող ներկան դարձավ անծիր: Ինչո՛ւ. այսպես անոգ եւ մնացի...

Զարենցագիտությունը սկզբնավորվել է հանճարեղ բանաստեղծի ողջության ժամանակներից: Նրա մասին առաջին գրավոր ելույթները, որոնք արժեքավոր գիտական բնութագրումներ են պարունակում, պատկանում են Ն. Աղբալյանի, Հ. Մուրադյանի, Դ. Մակինյանի եւ Ս. Հակոբյանի գրչին. ըստ Երթյանի՝ սրա՛նք են չարենցագիտության իրական հիմնադիրները, որոնք 1919-30-ական թթ. իր ձեւավորման ու հասունացման ընթացքի մեջ տեսան ու գնահատեցին բարձրացող հանճարին, ջանացին պաշտպանել նրան հակառակորդների վտանգավոր ու գեղիկ հարձակումներից: Սակայն Զարենցի եղբայրական վախճանից հետո թե՛ նրա աւու՜նը, թե՛ ստեղծագործությունը շուրջ քսան տարի արգելվեցին խորհրդային երկրում. բնակատեղաբար, խորհրդային Հայաստանում նույնպես տեղողջվածք դադար ունեցավ չարենցագիտությունը: Փաստորեն այդ դադարը ընթացում է Վ. Նավասարդյանի ստեղծել Զարենցի մասին իր անչափ կարեւոր գիրքը, որն իր սուր հարցադրումներով, փաստական հարստությամբ եւ չարենցյան երկերի համարձակ ու հմուտ վերլուծություններով կանխել է հետագա հեղինակավոր չարենցագետներին, որոնք իրենց լավագույն աշխատություններն ստեղծել են 1950-ական թթ. կեսերից հետո: Ընդ որում՝ աչքաթող չպետք է անել եւ այն հանգամանքը, որ Վ. Նավասարդյանը ծանոթ չէ եղել Զարենցի 1934-37 թթ. ստեղծագործություններին, որոնք այդ ժամանակներում դեռեւս չէին հրատարակվել:

Հայրենիք-Սփյուռք կապի անկանոնության պատճառով Վ. Նավասարդյանը չէր կարող անմիջական անցություն ունենալ առաջին տասնամյակների հայաստանյան գրական կյանքին: Ըստ երեւույթի՝ տեղեկատվության պակասը պիտի լրացվեր նյութերի աստիճանական կուտակումով: Այդ պատճառով էլ Զարենցի մասին իր գիրքը նա պատրաստել է 1946 թվին կամ զուգե՛ր ավելի ուշ՝ նրա մասին մինչ այդ եղած գրականագիտական գրականություն ու մամուլը ուսումնասիրելուց հետո: Բայց արձայն նույն տարում չէր կարող հրատարակել, որովհետեւ Զարենցը արգելված անուն էր խորհրդային երկրում, եւ ծանր փորձությունների կարող էր ենթարկվել նրա անունը ինչեւնոր կամ Վ. Նավասարդյանի սույն գիրքն իր ծեղքն ունեցող: Ուստի կատարակահամար էր այն հրատարակել միայն Զարենցի պետականորեն արդարացումն ու վերականգնումից հետո միայն, թեւե 1957 թ. հրատարակվելուց հետո էլ այն խորհրդային երկրում արգելված մնաց արդեն երեւիսի՛վ Վ. Նավասարդյանի պատճառով: Եվ հիմա ընթերցողը կտեսնի ու կհասկանա, թե իրենից ինչ է թաքցվել:

Այս գրքի մի կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Վ. Նավասարդյանը, անշուշտ Ն. Աղբալյանից ստացած ներշնչումով, մեթո՛ծած, արգելված Զարենցին է գնահատել որպես հզոր անհատականություն, որպես դարի մեծագույն բանաստեղծական երեւույթներից մեկին: Այստեղ էլ դրսեւորվել են Վ. Նավասարդյանի գրական բարձր ճաշակն ու բանաստեղծության նուրբ գագուցողությունը, գրական ու կենսական փաստերը համադրելով վերլուծելու հզոր կարողությունը:

Նա նախ ներկայացնում է այն միջավայրը, ուր հասավ իր նետում դարի մեծագույն բանաստեղծը: Այս կատարակով էլ նա հանգամանորեն կանգ է առնում 1920-ական թթ. գրական կյանքի եպան երեւույթների վրա: Բնականաբար, թե՛ «Երեքը»՝ կերվարացիայի, թե՛ մյուս երույթները ընտարվելու Վ. Նավասարդյանը պետք է հենվել ժամանակի ողջամիտ գրականագետների՝ Հ. Մուրադյանի, Դ. Մակինյանի եւ Ն. Աղբալյանի հողվածների ու դիտարկումների վրա: Այդ եւ վկայում այն ընդարձակ ջաղվածքները, որոնք Նա իր խոսքը հիմ-



նավորելու համար բերել է հիշյալ գրականագետների աշխատություններից: Արժեքավոր են Աղբալյան-Զարենց գրական բանականությանը տրված պարզաբանումները, որոնք նոր լույս են սփռում դարի մեծագույն բանաստեղծի եւ քննադատի թե՛ մարդկային, թե՛ գրական անցությունների վրա, բացառություն մեր գրական կյանքի՝ սովորում մնացած շատ կարեւոր մանրամասներ:

Մեր խորին համոզմամբ՝ առավել կարեւոր են «Եպիքական լուսաբաց» եւ «Գիրք ճանապարհի» ժողովածուների բնութագրումները եւ մանավանդ Ե. Զարենցի ստեղծագործության մեջ ազգային ոգու պատկերման, հայության ճակատագրի ու համամարդկային խնդիրների շուրջ փիլիսոփայական խորհրդածությունների նավասարդյանական ինքնատիպ դիտարկումները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հենց այսօրվա գրականագիտության եւ մասնավորապես չարենցագիտության սեսանկյունից:

Ուշագործության են արժանի մասնավորապես «Heinrich Heine» (Հայկերիս Հայեն) եւ «Մահվան տեսիլ» ստեղծագործությունների, ինչպես նաեւ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարի նյութերի ինքնուրույն մեկնությունները, որոնք բացահայտում են բազմաթիվ գաղափարներ, որոնց գերծնում այդ ժամանակներում կարող էր իրականացնել Վ. Նավասարդյանի նման ներքնատես, լայնախոհ ու քաջահմուտ մտավորականը:

ՊԵՏՐՈՍ ԴԱՓԱՆՑԻ

(1700-ական թթ. սկիզբ - 1784)



Պետրոս Դափանցին 18-րդ դարի ինքնատիպ բանաստեղծներից մեկն է, որի պոեզիան իր բարդ գաղտնագրերով բերում է քրիստոնեական հավատի, ապաշխարանքի, հայրենիքի, սիրո ու գարնան հարուստ նվազման: Հոգևոր գործիչ էր, բանաստեղծ ու երգիչ: Որպես խոսքի ու մեղեդու վարպետ՝ էական նորություններ բերեց կրկներգի, բարդ հանգի և ներքին հանգի ասպարեզում:

Կյանքը: Դափանցու մասին քիչ բան է պահպանվել: Ազգանունից դատելով՝ կա ծնված պետք է լինի կան Դափանում, նա Դափանի տարածաշրջանում: Ծննդյան թվականն անհայտ է, որը, ըստ կենսագրական այլ տվյալների, պետք է լինի 1700-ական թթ. սկիզբը:

Եղել է հոգևոր գործիչ: 1753-1756 թթ. Էջմիածնի միաբանության անդամ էր: Նվիրակի կարգավիճակով նա եղել է Ղրիմում, Կոստանդնուպոլսում, Ադրիանապոլսում, Արմավուրում: Նվիրակությունն առաքելությունն էր հետո վերջնականապես հաստատվում է Կոստանդնուպոլսում:

1772-ին Ադրիանապոլսում վերադառնալով: 1780-ին՝ շատ առաջացած տարի-

քում, նշանակվում է Նիկոնիդիայի թեմի առաջնորդ, ուր ե վախճանվել է 1784 թ. մարտի 20-ին:

Տաղերի մեջ կան նրա կենսագրական առանձին մանրամասներ լրացնող փաստեր: Դրանցից մեկից պարզվում է, որ շատ է շրջագայել. «Ո՛վ իմ ազնի, թզենցադրյալ բե՛ հարցանես, խելագարեալ շրջագայիմ տարին բոլոր...» («Դարձեալ առ ազգն իւր սիրելի»):

Ալմնայտ է, որ ծանր, անգամ հալածական կյանք է ապրել: «Լաց եւ խնդիր առ տէր, բերես առանձն վերդուսեալ առաքի՜նոքիմս մեր» տաղի մեջ կան այսպիսի ինքնակենսագրական տողեր.

Գողուղի կայեալ քայլեմ
Կաղիկաղ, կամաց, կամաց,
Տըրտմութեան կտոր ու տալլ եմ,
Հին ցառով՝ ամաց, ամաց:

Ո՛չ գիտեմ առ ո՛վ երբայց
Եւ առ ո՛վ բողոք կայայց,
Այս ցառովը շրջեցայց,
Բախտըմ գիս՝ ամաց, ամաց:

«Առ ազգն իմ պատվելի՛ խորհրդաբար նշանակութեամբ վարդի» տաղում առում է, որ իր դեմ բազմաթիվ որդագայքներ էին լարել («Այս քո գերդյս բիր որդգայք սարեալ լարեմ»): Նա իրեն համարում է անօրենալ թափառական: «Աղաղակ խորհրդաբար առ բարձրեալսն աստուած ի խաչին, վասմ փրկութեան մարդկայնոյ ազգին» տաղի մեջ նա շատ ծանր տողերով է ներկայացնում իրեն.

Լալով շրջիմ թափառական, ո՛հ, ո՛հ,
Կարանեալ եւ անարեւան, ո՛հ, ո՛հ,
Արեւելոց համանրման, ո՛հ, ո՛հ,
Երեւեալ կամ ի տառանման, ո՛հ, ո՛հ:

Պետրոս Դափանցին եղել է բանաստեղծ, գրել է երգեր, եւ ինքն էլ կատարել: 1772-ին լույս է տեսել նրա «Գրքոյկ կոչեցեալ երգարան» ժողովածուն: Առաջաբա-

նի մեջ Դափանցին իր գիրքը բնորոշում է որպես «Երգարանիկ»: Նրա երգերը լայն տարածում են ունեցել ժողովրդի մեջ եւ երկար ժամանակ պահպանվել են: Նրա տաղերից 36-ն ունեցել են իրենց եղանակն ու երգվել են:

Նրան ճանաչել ու գնահատել են ինչպես իր ժամանակակից, այնպես եւ հետնորդ սերնդի այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Սիմեոն Երեւանցի եւ Դուլա Վարմեցի վեհափառները, ինչպեստոր Արվանդը եւ ուրիշներ:

Նրա ժառանգությունից պահպանվել են մեկ հատորյակի չափ քնարական բանաստեղծություններ, վեց տասնյակից ավելի քառատող ու բյուր, ինչպես նաեւ մեկ պոեմ: Նկարագրով եւ գաղափարախոսությամբ Դափանցին հայրենասեր բանաստեղծ էր ու գործիչ: 1772 թ. ռուս-թուրքական պատերազմը նրա համար առիթ էր՝ գրելու հայրենասիրական բանաստեղծություններ եւ երգելու Հայաստանի անկախ պետականության մասին:

Իր գեղարվեստական մտածողությամբ կրում էր Պաղտատար Դավիթի ակնհայտ ազդեցությունը: Նրանք երկուսով (նաեւ Հակոբ Նալբանդը) սկզբնավորեցին Կոստանդնուպոլսի հայ բանաստեղծական դպրոցը:

Մտեղծագործությունը: Պետրոս Դափանցու ստեղծագործությունը բավականին բնորոշվում է եւ բազմակողմանի՝ հայրենիք, հավատ, ապաշխարանք, սեր ու գարուն, խրատ, քաղաքախոսություն, կրթություն, իմաստասիրություն եւ այլն: Շատ դեպքերում նրա խոսքը գաղտնագրված է, եւ ուսումնասիրողի համար դժվար է պարզել նրա օգտագործած խորհրդանշանների բուն եությունը: Այսինքն՝ նրա այլաբանությունները բարդ են: Ինքը՝ հեղինակը, շատ լավ գիտակցում է այլաբանության դերը խոսքի մեջ, դրա վկայություններից մեկն էլ հենց «այլաբանություն» բառի կիրառությունն է՝ որպես իր գաղտնագիրը կարդալու ուղեցույց, ինչպես «Ձայլաբանութեն» վերնագիրը:

Դափանցու ժառանգությունն ամբողջական պատկերացում է տալիս հեղինակի, նրա նախասիրությունների, ապրած ժամանակի մասին: Եւրպամբ մա առավել չափով հոգեւոր քանակություն է, որը, սակայն, անդադարձել է նաեւ մարդկային կյանքի բազմապիսի այլ խնդիրների:

Դափանցու ժառանգությունն ուսումնասիրել եւ լույս է ընծայել Շուշանիկ Նազա-

րյանը (տե՛ս **Շուշանիկ Նազարյան**, Պետրոս Դափանցի, Է., ԳԱ Կրթատարակչություն, 1969: **Պետրոս Դափանցի**, Բանաստեղծություններ, Է., «Փորձիրդային գրող», 1990):

Հայրենասիրական քնարերգություն: Պետրոս Դափանցին իր հայրենասիրական զգացմունքներն իրականացնելու համար կատարում է միջնադարյան պոեզիայի իմանական խորհրդանշաններից մեկի վերափոխում: Վարդը, որ խորհրդանշում էր աշխարհիկ եւ հոգեւոր սեր, մի դեպքում դառնալով աղջիկ, մյուս դեպքում՝ Քրիստոս, հիմա ստանում է նոր բովանդակություն՝ վարդն իմաստավորում է հայրենիքը:

«Առ ազգն իւր սիրելի» տաղն սկսվում է այս տողերով. «Ժ սուգ եւ լաց արդ մըռի, Նոր ողորց շախդ գրտի»: Սա եռատող բանաստեղծությունն է՝ երկտող կրկներգերով, որի մեջ կայուն է կրկներգի առաջին տողը, իսկ երկրորդը բերեալի փոխվում է.

Դէպ առ քեզ յաճախ գալով,
Շատ ու քիչ ըստիմով լալով,
Միշտ ըզրէն զերդոյ տալով,
Նազելի՛ վարդ, վարդ,
Ամաչեմ զար ամենայն:

«... Ի գեղոս քո նաչի,
Բերկեցալ մինչ հայելի,
Քարծառայն գայս վաչի,
Նազելի՛ վարդ, վարդ,
Ո՛չ քազիմ զար ամենայն:

Վարդի իմաստը նա մեկնաբանում է բանաստեղծություններից մեկի այս վերնագրի մեջ. «Առ ազգն իմ պատուելի՛ խորհրդաբար նշանակութեամբ վարդի»: Թե՛ այս եւ թե՛ «Դարձեալ առ ազգն իւր սիրելի» տաղերի մեջ ակնհայտ են Պաղտատար Դավիթի «Ժ մեծամեծ աղբյուրակայն» տաղի անդրադարձերը: «Առ ազգն իմ պատուելի...» տաղը գրված է եռյակ տողերով եւ եռատող կրկներգով: Ինչպես բանաստեղծը կիսուրե հայրենիքի հետ, այդպես էլ խոսում է վարդի քփի հետ.

Է՛, իմ վարդիկ, ըզրեզ ողբամ ամի-ամի,
Քուրդ գեղոյ թըշնամի է ամէն բամի,
Թուրիդ խղիւղ, քերթը ցըրել ի քսց կամի...
Ըզմա քսեաւ,
Ըզրեզ պահեա՛,
Եւ գիս շահեա՛:

Շարունակություն՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ


ԳՐԻԳՈՐ Ե ԱՆԱՎԱՐԶԵՅԻ

(1293-1307)

Սկիզբը՝ էջ 3

Խաչակիրները կաթողիկոսին առաջարկեցին պատարագի բաժակին ջուր խառնել իրենց նմանությամբ: Սկզբում չհամաձայնեց, սակայն այնուհետեւ ընդունեց առաջարկը, ինչը հայադավանության դեմ պայքարի գլխավոր մեկնակետն էր: Նա պատարագի բաժակին ջուր խառնելու համար, որը թե՛ ոչ միշտ, այսպիսի-որ ժամանակ ծածուկ էր առնում, ստացավ Ձորո մականունը: Դավարն առաջին զինումն էր: Այնուհետեւ, փաստորեն, ջնջելով Հայոց Եկեղեցու ավանդական կարգերը՝ համաձայնեց ընդունել հույների եւ լատինների կողմից ընդունված յոթ ժողովներ, որով ընդունվել ժողովների թիվը հասավ 14-ի: Նա ընդունեց նաեւ երկու բնության, երկու ներգործության սկզբունքը՝ այնուհետ, թե մի Հայոց կաթողիկոս եւ մի Աղվանից կաթողիկոս, որոնց անունները չի տալիս, նույնպես ընդունել են այն: Նա համաձայնեց Սուրբ Մովսեսը նշել ղեկավարների 25-ին՝ բաժանելով այն Հայաստանի տոնից: Գնաց ուրիշ շատ գիշուներին էս, որոնց վրա կապ առնել իմաստ չունի: Պետք է մասնավորապես նշել, որ Հայոց Եկեղեցուն նույնպես ժամերգությունները պետք է եկեղեցում կատարվեն, քահանայական ատոհմները տրվեն լատինների նմանությամբ, պատկերներն ընդունվեն ասիական եւ առանց օրինության: Առաջարկված կետերից մի քանիսը

դեռ ժամանակին հույներն էին փորձում պարտադրել հայերին՝ միաբանության հասնելու համար, սակայն Նոր պահանջները գալիս էին լատիններից: Գրիգոր Անավարձեցու օտարաքրիստոնեական այնպիսի չափեր ընդունեց, որ նա փորձեց, թելադրված պահանջներից գալու, այլ փոփոխություններ էլ մտցնել Հայոց Եկեղեցուն: Դրանցից էր առավելային ժամերգության մեջ *Մեծացուցե՛ք* կարգը հասկացողյա դարձնելը, ինչը Հայոց Եկեղեցուն, հին ծեսին համապատասխան, կատարվում էր կիրակի օրերին եւ կիրիված էր Զրիստոսի մարդուկության կամ հայտնությանը: Այս նպատակով նա *Մեծացուցե՛ք*-ի բազմաթիվ շարականներ հորինեց, որոնք հաստատուն կիրառություն չգտան, սակայն *Մեծացուցե՛ք*-ի ամենօրյա լինելը դրանով տվողական, իսկ կաթողիկոսն էլ ստացավ երգչախումբ մականունը: Նրա գրած շարականները գրեթե 33-ը մեզ են հասել, որոնցից 9-ը պատկանում են Աստվածաշնչախոսության տոնին, որի 9 օրերը բաժանված են երկու ճրագույնների, երկու եռօրյանների եւ թվապատկան տոնի: Նաեւ հորինել է 18 կանոն՝ Հայոց Եկեղեցու պաշտոնական տոնների համապատասխան, չնայած դրանցից շատերը նախապես իրենց շարականներն են ունեցել: Մնացած 6 կանոնները նախատեսված էին Նոր տոնների համար, որոնք ինչն էլ մուծել էր Հայոց Եկեղեցի: Շարականները բնավ



չեն հավատարմ Անավարձեցու գրական մեծությունը, ինչը խոստովանում էին անգամ կաթողիկոսի կողմնակիցները: Նրա գրած շարականներից եւ ոչ մեկը չի գործառնվում այլեւս, եւ որակն իսկապես պատճառը ուղե էր Գրիգոր Տաթևացին: Անավարձեցու գործերից միայն, թերեւս, լատին սրբերի վերաբերող գործերն են, որ պահպանվել են «Ձայնավարդ»-ում: Այդ պատճառով էլ «Ձայնավարդ»-ը ընդ է նրա հատուկ ուշադրության անարկան:

Առանց իր ծրագրերը ընկելու եւ ընդունելու՝ կաթողիկոսը ձեռնամուկ եղավ որակն իրականացնելու՝ չապախելով, որ որակն եկեղեցական ժողովի համակարգին արժանանան: Հրաման տրվեց, որ ով կուզեա իրեն

մանկել, կարող է հրաժարվել հնավանդ ծեսից եւ Նոր կարգն օգտագործել: Նա փորձում էր նորամուծություններ կիրառել ոչ միայն Կիրիկիայում, այլեւ բոլ Հայաստանում՝ որպես համար ուղարկելով 4 պատգամավորություններ Այրարատի եւ Վասպուրականի վարդապետներին, Տարսնի եւ Սյունյաց հոգեւոր աբեղան: Սակայն բոլ Հայաստանում Անավարձեցու ծիցերը բոլորովին ապարդյուն անցան՝ լուր առաջ բերելով արեւելյան եպիսկոպոսների բուռն դիմադրությունը:

Կիրիկիայի քաղաքական կյանքում նույնպես հետաքրքիր իրադարձություններ տեղի ունեցան: Հեթոմ թագավորը 1294-ին հրաժարվեց իշխանությունից՝ այն հանձնելով իր Թորոս եղբորը: Նա հեռացավ Ֆրանցիսկյանների վանքը, բայց այդտեղից էլ շարունակում էր ուղղորդել իր Թորոսի քաղաքականությանը՝ առաջ բերելով ավագանու լուրջ դժգոհությունը: Նրա դեմ դաժանություն կազմվեց, սակայն դավադրությունը ճնշվեց, իսկ Հեթոմը կրկին իշխանության գլուխ եկավ: Իշխանական գործերից հետո էր նաեւ Թորոսը, ուստի թագավորական ինստանկալ դարձավ նրանց երրորդ եղբայր Սմբատը: Նորից փորձեր արվեցին՝ բյուզանդացիների եւ լատինների հետ միաբանության հասնելու: Երկուսն զնայով ուժեղանում էր դժգոհությունը Հեթոմի եւ Թորոսի դեմ, որից օգտվելով՝ Սմբատն իրեն թագավոր հռչակեց: Օծման հանդիսությունները տեղի ունեցան 1299 թվի հունվարի 6-ին: Սակայն Հեթոմը քաջարան չի դաժանեց թագավորական իշխանությունը, եւ Սմբատն օրենքի առաջ ընդամենը ինստանկալ էր:

Շարունակելի
Բաբկեն ԶԱՐԻՆԻՅԱՆ
ՀՀ ԳԱՎ ԹՊՅԱԿԻԳ ԱՆՈՂԱՄ, ԱՊՐՈՖԵՍՈՐ

ԿԻՅՄԱՆ ԱՍՏՈՒՒ ԴԱՐԳԵՎՆ Ե

Աստվածաշունչ Մատյանն ուսուցանում է, որ կյանքն Աստծոն պարզեմ է, ե մենք պետք է Նրա առջե հաշվետու լինենք այն բանում, թե ինչպես ենք տնօրինում այդ պարզեցը: Տե՛ր հայր, ինչո՛ւ է կյանքը համարվում Աստծու պարգև, ե մի՞թե մարդն ազատ է այն տնօրինելու՞ ըստ իր հայեցողության:

- Թերթեն Սուրբ Գրքի ամառն էլերը: Ծննդոց Գիրքը պատմում է, թե ինչպես Արարիչ Աստված Իր բարի, հայրական ևախախտմամբ ստեղծեց մարդուն՝ արարչության թագ ու պսակ հանդիսացող Եվան, որին տվեց իր պատկերն ու նմանությունը: Եվ Աստված մարդուն կյանք շնորհեց: Նա օտոնեց մարդուն ազատ կամքով: Ուստի մարդն իրավասու է տնօրինելու իր կյանքը՝ ըստ իր հայեցողության, սակայն Աստված տվորեցե՛ն նաեւ չարն ու բարին, օգտակարն ու վնասակարը: Ազատությունն իմաստ ունի, եթե ներդրակ է մատնու կամքին, առաջողորում է մեզ դեպի լույսը, բարին, երկնքի արքայությունը, այն երանավետ դրամից, որից մարդն արտաքսվեց մեղքի պատճառով: Այս կյանքը Աստծուց մեզ պարգևաված իրաշք է: Աստծու արարչագործությունը՝ բնությունը, կենդանական աշխարհը, ողջ տիեզերքը, իրաշք է, ամեն ինչ ներդրակ ու կատարյալ է, սակայն խաթարվում է մեղքի պատճառով: Մեղքի պատճառով խաթարվում են նաեւ մարդկային իրադրություններն ու ներդրակությունները: Երբ մարդկությունն իր ազատ կամքով չի հնազանդվում Աստծու կամքին, ընկնում է տարախախտ փորձությունների մեջ, ինչպես Աստվածաշունչն է ասում. «Փուշ ու տատակ, ցավ ու ներդրություն, աղետներ, պատերազմներ, աշխարհակործան գեներ, անբարո հասարակարգ...»: Այս ամենը մարդու «ազատության» արդյունք է, սակայն Աստծու շնորհած ազատությունը մարդուն երկնքի արքայություն է առաջնորդում:

- Ո՛րն է պատճառը, որ Աստծու պատկերն ու նմանությունն ունեցող մարդու հոգում խալաա բացակայում է պատասխանատվության զգացումն արարչության եւ իր կյանքի հանդեպ:

- Աստծուց մեզ շնորհված մեծագույն պարգևի՝ կյանքի համար մենք պատասխանատու ենք: Յուրաքանչյուր պետք է գիտակցենք, որ պիտի կանգնենք Աստծու առջե:

Մեր հյուրն է Արգավանդի Ս. Սարգիս Եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր քհն. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Եւ պատասխան տանք մեր ապախեցի՛ր Աստծուց եւ պահի՛ր Նրա պատվիրանները, ահա այս է մարդկանց անդրաշնչին, որովհետեւ Աստված պիտի բոլոր արարածներին դատաստան անի Նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինե՛ն դրանք չար թե բարի» (Ժող. ԺԲ 13, 14): Երբ որեւէ մարդ է մահանում, ասում ենք՝ «Ողորմի՛ր Աստված»: Ուշագրավ է, որ Նույնիսկ հոգեւոր գիտակցությունը գուրկ, եկեղեցուց, հավատքից, քրիստոնեական արժեքներից կտրված մարդը գիտի, որ այս աշխարհից հեռացող մարդը պիտի անգնի Աստծու առաջ: Ուստի Աստծու ողորմությունն ենք ակնկալում՝ խնդրելով, որ Տեր Աստված ներողամտությամբ ու գութով մտնես: Շատ կարեւոր է, որ գիտակցե՛ք մեր պատասխանատվությունը: Կարեւոր է նաեւ, թե մարդն իր կյանքում ինչ արժեքներով է շարժվում՝ նյութապաշտ է, թե՛ բարձր է այս նյութից, այսինքն՝ Նրա ողջ իրենց, նպատակները սահմանափակվում են այս ժամանակակից կյանքով, թե՛ հավիտենականության հույսով, երազով է ապրում: Ս. Պողոս առաքյալն ասում է. «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Զրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ» (Ա Կորնթ. ԺԵ 19): Մեր ապրած կյանքով է, որ պիտի վերադառնանք առ Աստված եւ հավիտյանն հավիտենից լինե՛ք Նրա հետ:

- Տե՛ր հայր, իսկ ո՛րն է կյանքը տնօրինելու ճշմարիտ կերպը, ինչպե՛ս պետք է ապրենք մեր աստվածապարգեւ կյանքը, որպեսզի Նրա օրը գա, ե հաշվետու լինենք Աստծու առջե, չամաշենք մեր ընթացքի համար:

- Յուրաքանչյուր պետք է խնայե՛ր, երկրորդը, մեծագույն պատասխանատվությամբ վերաբերվենք այդ պարգևին, նվերին՝ երախտագիտությամբ՝ լցվելով Աստծու նկատմամբ: Զրիստոսն ասում է Ավետարանում. «Եւ եկա, որպեսզի կյանք ունենան» (Իովհ. Ժ 10): Աստված արարչագործությամբ մեզ կյանք շնորհեց: Բայց Աստված

մեզ երջանիկ կյանք շնորհեց Աստվածորոյ մարդեղացմամբ: Զրիստոսն աշխարհ եկավ, որպեսզի խավարում նստած ժողովուրդը մեծ լույս տեսնի, մեր խավարած կյանքը լուսավորվի: Զրիստոսն աշխարհ եկավ, որպեսզի մեղավոր մարդկությունը, դուք գալով մեղքի, մահվան սովերներից, ընթանա լույսի, արդարության ու արքայության ճամփով: Ուստի Զրիստոսով լուսավորվեց, իմաստնացավ ոչ միայն մեր երկրավոր կյանքը, այլեւ ժառանգորդը դարձանք անանց, մայրուն, հավիտենական կյանքի: Զրիստոսը՝ Ննեցյալների առաջին պատուը, հարություն առավ՝ բացելով երկնքի արքայության դռները՝ հաստատելով հավիտենական կյանքի գոյությունը: Մեկ բան է մարդուն խանգարում հավատալ հոգեւոր իրողություններին՝ Աստծուն, Ղաւսաստանին, երկնքի արքայությանը, հավիտենական կյանքին. մեղքը: Մեղքով կարծրացած մարդկային հոգիները չեն ցանկանում ընդունել Աստծու գոյությունը, հավիտենական կյանքի իրողությունը, Ղաւսաստանը, որովհետեւ այդ դեպքում պետք է պատասխան տան Աստծու առաջ: Ընդունենք թե ոչ, միևնույն է, պատասխանատու անանք է լինե՛ք մեր կյանքի համար. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշվի պիտի տան, որովհետեւ՝ քո խոսքերով պիտի արդարանաս եւ քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ 36, 37):

- Ծննդոց Գիրքը փաստում է, որ Արարիչ Աստված մարդու խնամքին եւ հոգածությանը հանձնեց արարչագործ բնությունն ու կենդանական աշխարհը՝ ողջ արարչագործությունը: Միևնույն մարդի անդադար մեղանցում է բնության՝ կյանքի աղբյուրի դեմ՝ աղտոնելով, ապականելով շրջակա միջավայրը՝ խնամելով, պահպանելով փոխաբեն: Միևնույն ժամանակ բնությանը կյանքում բնությունն ակնհայտորեն հակադրում է Աստծու կամքին եւ դարձյալ պատասխանատվության բացակայության հետևանք է: Կարող է լինե՛ք առե, իր երկրի մասին հոգավոր մարդու կողմում է, եւ որ հոգեւոր անկման հետևանքով է մարդը կորցրել իր կյանքի ճիշտ ընկալումը:



- Տեր Աստված երեմի պարտեզ տնեց՝ հանձնելով այն մարդու պահպանությանն ու հոգածությանը: Աստված մարդուն տնտես կարգեց ողջ արարչության վրա, սակայն մարդն ապակակեց մեղքով եւ ի չարս գործարդեց այդ պարգևը: Ս. Գիրքն ասում է. «Մարդկանց միտքը մանկուց չարի ծառայության մեջ է» (Շննդ. Ը 21): Այսօր բնապահպանական բազմաթիվ աղետների առջե ենք կանգնած: Այս ամենը մարդկային գործունեության ոչ իշխմամբ, անպատասխանատու, հանցավոր գործունեության արդյունք է: Զանի ողջ մարդը չի հրաժարվել մեղքից, չարի, սատանայի որդայթներից, պիտի շարունակի փչացնել իրեն շնորհված կյանքը, աստվածատնեղծ բնությունը: Նույնիսկ կենդանական աշխարհի Աստծու կամքին հակառակ չի ընթանում, բնության բոլոր տարրերը, տարբերները հնազանդ են Աստծուն, միայն մարդն է, որ ազատ կամքով հաճախ է շեղվում Աստծու ուղեւշած ճանապարհից՝ խաթարելով աստվածատնեղծ խաղաղությունն ու ներդրակությունը: Ղալիի Եկեղեցու պատրիարք Ծննդա Գ-ն, մեջբերելով Ղալիի մարգարեի այն խոսքը, թե՛ «Ես հող եմ ու մոխիր», ասում է. «Ես հողից էլ վառն եմ, որովհետեւ հողը չի մեղանցում, սակայն ես հանապազ մեղանցում եմ»:

- Տե՛ր հայր, Նոր տարվա նախաշնին ենք գտնվում, ե վստահ եմ, որ յուրաքանչյուրս էլ կունեն

անք խոյունի, ինքնաքննության պահեր, կմտորենք, թե ինչ ձեռքբերումներ եւ կորուստներ ունեցանք անցնող տարվա ընթացքում, ինչպե՛ս տնօրինեցինք աստվածապարգեւ մեր կյանքը: Ի՛նչ կատարեմք մեր ընթերցողներին:

- Տարեմուտին շատերս ենք մտածում, թե ինչ արեցինք անցնող տարվա ընթացքում, ի՛նչ բացթողումներ եւ ձեռքբերումներ ունեցանք: Սա փոքրիկ ինքնուրույն է այս աշխարհից մեր ելքի: Այս կյանքում մարդը պատրաստվում է հավիտենականության մտնելուն, իսկ թե ինչպիսի հավիտենականություն է երկնքի արքայություն, թե՛ հավիտենական դատապարտություն, կախված է մեր ազատ կամքից որսեւորումից: Ամեն վարկյան պատրաստ լինենք Աստծու առջե կանգնելու, մեր ապրած կյանքի համար հաշիվ տալու: Միթեք տուր, մաքուր անարատ կյանքը, չգնանք մեղքի, չարիքի եւ անօրինության ճանապարհով: Ապրենք մեր կյանքը Աստծու կամքի համաձայն, որպեսզի պատասխանատվության օրն ամոքող չլինան, այլ արժանանանք Աստծու ողորմածությանը: Զրիստոսը հարուրան առավ մեղեքներից, ե բոլոր Նրան հավասարեցրեց իրարություն պիտի անեն՝ մտնելով ճմառե, այլ արժանանանք Աստծու ողորմածությանը: Զրիստոսը հարուրան առավ մեղեքներից, ե բոլոր Նրան հավասարեցրեց իրարություն պիտի անեն՝ մտնելով ճմառե, այլ արժանանանք Աստծու ողորմածությանը: Մեր ընթերցողներին ցանկանում եմ լույս, կյանք, սեր ե երկնքի արքայություն:

Զյուրքեկալեզ
Ամե՛լա ԿԱՉԱՐՅԱՆԸ



ՊԵՏՐՈՍ ԱՓԱՆՅԻ (1700-ական թթ. սկիզբ - 1784)


Սկիզբը՝ էջ 5
Տապ է խորշակն ի քեմ ի բաց
ո՛չ հեռանամ,
Գեղով բոլին ի յայտս
իրեանց յորջ ջերմանամ,
Հազար դարիւ եւ բիր սիրով ո՛չ
մերանամ...
«...» Ի սուգ եւ կոծ կըծկեալ
մըտտիմ բացատ վայրի,
Ջաշս իմ յառեալ մայիմ
լըքըսցողը քո արի,
Մերս ի սիրոյդ վաղ
գարբուցեալ ըստրուկ զգրի...
Հայրենիքը ինչեիս մա տարին
բոլոր զգաստ է: Գրում է («Դար-
ձեալ առ ազգն իւր սիրելի»):
Յորժամ ի քեմ ոչ գոյ ողջոյմ
կամ բոլոր յիշման,

Ես մեռելոցն եմ ի կարգի, կերպ
անկեմքում,
Ինչ ոչ երբեք երեւին ինչ էքս
ամենայն,
Ձի առանց քեզ ես ոչ բերկրիմ
տարին բոլոր:
«...» Ի բամբու բոյժ
դանդաղեալ անագանիս,
Ամեալ փատար՝ գարբու լույս
ոչ ազանիս,
Ի մըքմանեղ մինչ ոչ փութով
գարբուցանիս,
Ես տատանեալ միշտ դեզերիմ
տարին բոլոր:
Վերջին տան մեջ հայտնում է
գործյան քվականը՝ «Հազարս ա-
մանց կարաւորսինքն քարեայն կայ
յիս, Ձի լըքացալ ի գալն ի յերգս
ԻՄԱ բայիս...»: Այսինքն հազար +
ԻՄԱ 1000 + 20 + 200 + 1 = 1221 +
551 = 1772:

Հայրենիքի մասին խոսելիս
նրան որի հաւաքն ու գոչն եմ
պատում: Գարնան գալն անգամ
հոգս է: Թողունքը գալիս եմ ե-
րան-երան, նրանց օրեան եմ ան-
գամ «ձյունապատ լերիք»։ Սա-
կայն վտանգված է հայրենիքի
գարունը («Ձվալակութեմն հայ-
րենեաց մերք, ի դէմս գանազա-
նից մմանութեանց»)։
Վարանեալի սեսա տխալը
ողորձայն գոչն,
Վասն յամեցման գարնան
խոյրդ հառաչն,
Արտասուար եւ լալով
գաստում աղաչն,
Համայնքն ինչն ճիր ու ցամ՝
երան-երան:
Կործանեցան, անկան
պարիսպ պարտիզազ,
Թեք անկեալ, բայրայեալ

Հուրջ-Հուրջանակի,
Ցամաքեալ ամպերն, ո՛չ
ցալոն առատ,
Պարբ հաւոց եւ բոլոնց լամ՝
երան-երան:

Հարունակեի
Ղալիի ԳԱՍԿԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. ողկտոր,
պրոֆեսոր




Սկիզբը էջ 4

Նրան հաջողվեց է Չարենցի այլաբանական կերպերի ընկալումը բացահայտել թաքուցյալ ճշմարտությունները «պիղծ սերակին» մատուցված գոհի՝ «Եղեռնի ինձանի ընծա» հայության, եւ նրա ազատագրական պայքարի զարգացողական առաջնորդների ու մարտիրոս գավակների՝ ազգային հերոս գործիչների մասին, ճանաչել ու մատնացուց է արել նրանց իրական նախատիպերին, որոնց գեղարվեստորեն կերպավորել է Չարենցը «Մահվան տեսիլ» պոեմում՝ առանց նրանց իրական անունները տալու: Դեռևի Ալիշանի, Պատկանյանի, Նազարյանի, Րաֆֆու, Սիմանյանի,

Վահագն Նավասարդյանի եւ Եղիշե Չարենցի մի ճակատագրական հանդիպումը

թոյի, Վարուժանի կերպարների հետ միասին Վ. Նավասարդյանն առանձնակի բնախնդրությամբ է անդրադարձել Չարենցի կերտած Քրիստափոր Սիբայեյանի կերպարին՝ մատնացուց անելով հատկապես Չարի հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից մեկի կյանքի եւ գործունեության այն դրվագները, որոնց պատճառով հանձնարել էր իրեն անհատապես թաքուցել 30-ական թթ. անկարելի ժամանակներում այլաբանորեն ճշմարտություններ էր ասում հակառակ բոլշևիկյան պաշտոնական կեղծ թարգմանության: Այդ բացահայտումներով հայտնի են դառնում ոչ միայն «մեծ ոճորդը» Եղիշե Եղիշյանը (սա Դովի. Շիրազի արտահայտությունն է - Ս. Ս.): եւ արյունաբու սուլթան Ջամիլին՝ իրեն արքային (սա էլ Չարենցի ընդունումն է - Ս. Ս.) մեծահարյուն հանդուգն ծրագրի ձախողման մանրամասները, այլեւ 1905 թ. Վիտոզի փեշերին ժամանակից շուտ պայթած ռուսիկ հետեւանքով գոհված եւ իր նպատակը չհրապարակած Քրիստափոր Սիբայեյանի մարդկային ողբերգությունը: Ի տարբերություն ուրիշ չարենցագետների, որոնց «Գիրք ճանապարհի» գրքում է մանավանդ «Պատմության քառուղիներով» ու «Մահվան տեսիլ» պոեմներում տեսնում էին անցյալը վարկաբեկելու նիհիլիստական դրսևորումներ, Վ. Նավասարդյանն իր վերլուծության մեջ Չարենցին այդպիսի անհեթեթ մեղադրանք չի հացեցրել:

ընդհակառակը, ամբողջությամբ մեջբերելով «Մահվան տեսիլ» Զ. Միքայելյանի վերաբերող հատվածը՝ նա մատնացուց է անում Չարի կուսակցության հերոսական գործունեությունը՝ մանավանդ Բանկ Օտոմանի եւ Խանասորի արշավանքի դրվագները գնահատող չարենցյան ընդունումները՝ դրանց մեջ տեսնելով միայն պատմական իրողության բարձրարվեստ ու ճշմարտացի պատկերում: Այսպես է բացահայտվում պատմական, գեղարվեստական ու գիտական միավորյալ ճշմարտությունը: Վ. Նավասարդյանի «Չարենց, հուշեր եւ խորհրդածություններ» գրքի վերջում կա մի բաժին՝ «Մայրս» խորագրով: Սա Վ. Նավասարդյանի շուշեցի մոր մասին մի հուզիչ պատմություն է՝ կապված Ե. Չարենցի հետ: 1925 թ. փետրվարին «Խորհրդային Չայաստան» օրաթերթում կարդալով Չարենցի «Չանգուցյալ Պարոն» կամ Պարոն Չանգուցյալը՝ արտասահմանյան պատմվածքը՝ Վ. Նավասարդյանի մայրը խիստ փրկված էր, գնում է խմբագրություն՝ Չարենցից պատասխան պահանջելու, թե ինչու՞ է նա իր որդուն հակուցյալ անվանել: Բայց երբ արտասահմանից վերադարձած Չարենցն ինքն է գնում նրան այցելության եւ, խոստման համաձայն, նրան է հանձնում վտարանդի որդու՝ Վ. Նավասարդյանի նամակը, փոխվում է Չարենցի հանդեպ մոր վերաբերմունքն այնպես, որ նրան, որ նրան իր



որդուն, հյուրասիրում է իր պատրաստած համեղ կոլոկալով:

Վ. Նավասարդյանի «Չարենց, հուշեր եւ խորհրդածություններ» գիրքը հանձնարել էր թանկատեղի ծննդյան 110 եւ մահվան 70-ամյակի առթիվ լավագույն նվեր է հայ մտավորականության եւ ընթերցող լայն շրջանակների:

Սամվել ՄՈՐԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր


Իրանն արդ. ՍԱՆՖՐԱՆՑՈՒՄԻ (Շախմուրյան)

Իրենց մարդկային ծրագրերի մեջ խիստ ինքնավստահներին դիմելով՝ Չարենցն առաջադրել ասաց. «Այժմ լսե՛ք, որո՛ւք, որ ասում եք. «Այսօր կամ վաղը կգնանք այսինքն քաղաքը, մեկ տարի կմնանք այնտեղ, կվաճառենք եւ կվաստակենք»: Այսպես եք ասում դուք, որ ոչինչ չգիտեք վաղվա մասին, որովհետեւ ի՞նչ է ձեր կյանքը, հիրավի մի մշուշ է, որ մի պահ երեւում է ու ապա անհետանում: Միևնույն ժամանակ եք ասելով. «Եթե Տերը կամենա, եւ ապրենք, կանենք այս կամ այն բանը»: Բայց արդ, պարծենում եք ձեր ամբարտապանությամբ: Այսպիսի ամեն պարծանք չար է» (Չարենց. Դ 13-16):

Թվում է՝ սա միանգամայն անվիճելի ճշմարտություն է՝ հիմնված յուրաքանչյուր մարդու եւ յուրաքանչյուր օրվա փորձի վրա: Երկրի վրա կյանքը «հիրավի մի մշուշ է, որ մի պահ երեւում է ու ապա անհետանում»: Արժե՞ք չափից ավելի հաշվենկատ կյանք կառուցել այդ «մի պահ»-ի մեջ: Պահը երկար չի մնում, ինչպես եւ երկրային կյանքը: Սակայն մարդկային հաշվարկները սովորաբար տարվում են այլ կերպ: Իր հաստատունության ու աներերության մեջ խիստ համոզված՝ մարդը կազմակերպում է իր կյանքը, պայքարում, ծրագրում՝ անտեսելով աշխարհում ճնախատելված իրականությունը՝ պայմանավորված այն բոլոր փոփոխականությունները, որոնց տեսլում մշտապես Աստված է: Աստված է տերը բոլոր երեւութական ու աներեւոյթ, ներկա ու ապագա (որը մեզ համար ինչ աներեւոյթ է) գոյերի: Մենք՝ մարդիկ, այնպես հաճախ ենք «պարծենում» մեր ծրագրերով ու որոշումներով: Եվ փոխանակ, ինչպես խորհուրդ է տալիս առաջադրել, ասելով՝ «Եթե Տերը կամենա, եւ ապրենք, կանենք այս կամ այն բանը», մենք անմիջապես, անբեկանելի կերպով եւ ինքնավստահ ասում ենք, թե մենք դա անպայման պիտի անենք, թե պիտի կառուցենք ու կատարենք, անպայման պիտի հաղթենք, պիտի հաղթահարենք...

«Այսպիսի ամեն պարծանք չար է», որովհետեւ դրանով մենք փորձում ենք Տեր Աստծուն հեռացնել աշխարհից, եւ քանի որ Աստված է ճշմարիտ տերը ամենայնի, ապա մենք մեզ գրկում ենք Նրա օգնու-

ՄԱՐԴՈՒ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԶՈՐԻԹՅՈՒՆ



թյունից ու օրհնությունից: Այո՛, չափից շատ են մարդիկ արտահայտում այն չիմնավորված միտքը, թե իրենց կյանքը, հաջողություններն ու հաղթանակները կախված են տոկ իրենցից, եւ շատերն աշխարհում հպարտանում են դրանով: Բայց նման մոտեցումները մշտապես փլուզվում են ողջ աշխարհի աչքի առաջ: «Անսպասելի» հիվանդությունները, տարերային աղետներ, երկրաշարժեր, պատերազմներ են տեղի ունենում մարդկանց հետ, որոնցից տառապում են բոլորը. կարծես արագընթաց կործանումների են դառնալիս անվտանգ ընտանիքներն ու համայնքները, կուսակցություններն ու հզոր տերություններն ու հպարտ ղեկավարները, միջախառնված են մարդիկ, «անժամանակ» մահերը գտնում են մարդկանց՝ անկախ տարիքից, եւ մարդկային հոսքը թափվում է այս աշխարհի այն ծայրը՝ հափտենությունը: Սերունդ առ սերունդ անհետանում են, եւ անցյալ դարերի պատմությունը մնում է որպես երազ, երբեմն էլ որպես մարդկության մոճավանք: Երիտասարդներն ու տարեցիները մեկնում են անախտ հեռուներ, գնում են շրջապատի համար անսպասելի՝ անավարտ թողած իրենց ծրագրերն ու սկսած գործերը... Մարդկային

հաշվարկների տրամաբանությունը փլուզվում է անընդհատ: Եվ չկա մի հաշվիչ, որ կարողանա կանխատեսել ամեն մի մարդու ապագա պահն ու օրը: Բոլորի կյանքը պահպանվում է միայն Արարչի ծրագրերում, եւ յուրաքանչյուրի սահմանը որոշում է միայն Նա:

Բայց մարդը թեթեամտորեն անվերջ կրկնում է իր հին սխալները, որոնց մասին նշված է ուրոնը՝ խառնաշաղի արտահայտված են դեռեւս 20 դար առաջ. «Այսօր կամ վաղը կգնանք այսինքն քաղաքը, մեկ տարի կմնանք այնտեղ, կվաճառենք եւ կվաստակենք» եւ այլն: Սովորական մարդկային տրամաբանություն: Տերեկվա եւ գիշերվա հերթափոխության, մակընթացության ու տեղատվության, կրակի մշտական տաքության եւ սառույցի սառնության ֆիզիկական ֆեյնոմենների հաստատունությունը մարդու մակերեսային միտքը տանում է այն եզրահանգմանը, որ իր «վաղը» եւ «վաղը չի մյուս օրը», ֆիզիկական օրենքների տրամաբանությամբ, անկասկած անգլենավորվելու են իր «այսօր»-ից... Այդ չիմնավորված տրամաբանությունները եւ կեղծ հավատը՝ երկրային արժեքների հաստատունության ու կայունության հանդեպ, պետք է փոխարինել այն ճշմարիտ հավա-

տով, որ մարդիկ մշտապես ու ամեն բանում կախված են առաջին հերթին Աստծից ու մեծ կամքի որոշումից: «Եթե Տերը կամենա, եւ ապրենք, կանենք այս կամ այն բանը», ահա, մեր՝ ոչ միայն անձնական, այլեւ համայն մարդկության ապագային վերաբերող անմեղսական բանաձեռը: Եթե մենք, թեկուզ մի փոքր, դուրս մղենք մեր գիտակցությունից այդ անբնական, ինքնակարծությունից ու ինքնավստահությունից սերված վերաբերմունքը կյանքի հանդեպ, ապա անմիջապես կտեսնենք ողջ անհարկությունն ու անխիղճությունը մեր ծրագրերի՝ կատուցված այնպիսի ազդեցիկ վրա, կամ ավելի ճիշտ կլինի ասել, այնպիսի պահի մեջ, ինչպիսին են մեր մարդկային կամքը եւ մեր ֆիզիկական կյանքը: «Որովհետեւ ի՞նչ է ձեր կյանքը. հիրավի մի մշուշ, որ մի պահ երեւում է եւ ապա անհետանում...»:

Սակայն գործնական է՝ իր բոլոր թուլություններով ու մահկանացու լինելով հանդերձ՝ մարդը միաժամանակ գործնական ուժ է՝ ոչ թե ֆիզիկական, ոչ թե նյութական, այլ հոգեկան, ուժ՝ ահռելի հոգեւոր-կառուցարար, ահռելի հոգեւոր կործանարար: Մարդը անձնում է (եւնեքս ու օվկիանոսներ, տիրում երկրի ընդերքին, հաստատում իր իշխանությունը երկնական մարմուռ, արագորեն կառուցում են նույնքան արագությամբ էլ կործանում շատ բան): Լինելով ֆիզիկապես տկար, ժամանակավոր, շատ-շատ բաներում կենդանիներից, անգամ բույսերից անկատար՝ նա իշխում է դրանց վրա... Որտեղի՞ց մարդուն նման իշխանություն էրկրի վրա: Որտեղի՞ց նրան տարբերները սանձահարող նման ուժ՝ իր կյանքի ողջ խնձհանություն մեջ: Պատասխանը մեկն է՝ հոգուց, նրա հոգեւոր էության անտեսանելի աչքերից, վերին աշխարհի՝ Նրա վրա դրված անգնահատելի կնիքից: Այդ էությունն ու վերելքային գոյության կնիքը փորձում են ծխել կամ դուրս բերել նրա գոյությունը մատերիայից, սակայն այդ փառաբանության ենթգիմարն ուժը յուրաքանչյուրի մոտ գալիս է ոչ թե մատերիայից, այլ նրանց հոգուց, թող որ կարող, թող որ հիմանը, բայց հոգուց, որն իր վրա կրում է վերին աշխարհի կնիքը:

Թարգմանությունը՝ Ռ. ՈՐՈՅԱՆԻ

ՆԱԿԱՍԱՐԴ, ՆՈՐ ՏԱՐԻ, ՄԱՄՆՈՐ, ԿԱՂԱՆԻ...



Ամանորը հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային տոնակատարություններից է, ծիսական սովորություններից մեկն է։ Ժողովրդի կենցաղում գործող պաշտոնական տոնացույցը դարերի զարգացման արդյունք է և թեպետ կապվում է քրիստոնեության գաղափարախոսության և եկեղեցու հետ, դժվար չէ, սակայն, դրանում տեսնել նախաքրիստոնեական ժամանակաշրջանի գաղափարների, ծեսերի և արարողությունների հետքեր։ Աշխարհի բոլոր ժողովուրդների ման հայերը եւս, զարգացման որոշակի աստիճանում հետնեցող բնույթի մեջ կատարվող պարբերական փոփոխություններին, առանձնացրել են ժամանակի այնպիսի ըմբռնումը, ինչպիսին տարին է։

Ամանորի տոնակատարության մեջ առկա են նախնական-կրոնական, սոցիալ-քառյակային ըմբռնումների այն բոլոր տարրերը, որոնք զարգացման հաջորդ փուլում դառնում են ամբողջական կրոնաքառյակային կազմակերպված միասնական աշխարհայացքի ատարձգը։

Մասնավորապես զարնանային և աշնանային օրահավասարի հետ կապված տոները, որոնք մեծ մասամբ Նոր տարվա տոն էին, միատարր են կարճատև չէին։ Դրանք տեսնում էին մի քանի օր, երբեմն նույնիսկ՝ ավելի։ Հայերի մեջ են Նոր տարվա տոնը տեսնում էր մի քանի օր։ Այսպես, Բարեկենդանը՝ 1-2 շաբաթ, Նավասարդը՝ 3 օր, քրիստոնեական Ամանորը՝ նույնպես 3 օր։

Ինչպես երկրագործական տոնական օրացույցը, այնպես էլ Ամանորի տոնակատարումն ամբողջ պատմական հայաստանի համար եղել է ընդհանրական՝ արտահայտելով հոգեւոր և տնտեսական միասնական կյանքով ապրող ժողովրդի աշխարհայացքը։

Ազգագրական տարբեր շրջաններում Ամանորի հետ կապված որեւէ ծես, սովորույթ կամ արարողություն երբեմն ունենում էր որոշակի առանձնահատուկ նրբերանգ՝ բնորոշ միայն տվյալ միջավայրին։

Ամանորի հետ կապված սովորությունների

ունի են հիմնվում է խոսքի կամ գործողության հմայական գործողության հավատալիքի վրա։

Երկրագործական տոնացույցը և դրա հետ միասին՝ Ամանորի տոնը ձեւավորվել են պատմական այն հեռավոր ժամանակաշրջանում, երբ հասարակության զարգացման ցածր մակարդակի պատճառով բնության և հասարակության երեւույթներին տրվող բացատրություններն ու բնույթաբանությունները, որոնք արտահայտում էին հասարակական գիտակցության տվյալ վիճակը, ունեին կրոնա-հմայական երանգ։ Սրանով պետք է բացատրել կրոնական բովանդակություն ունեցող ծեսերի և սովորությունների առկայությունը տոնական օրացույցում։

Հայկական երկրագործական տոնացույցի մեջ Ամանորի կարեւորությունն ու նրա հետ կապված պայմանների բազմակողմանիությունը մատնանշող ծիսական սովորություններն իրենց ծագումով հասնում են առաջին օրվա, առաջին պտղի, առաջին հանդիպման, առիաստարակ «առաջինի» նկատմամբ ունեցած բնապաշտական հավատալիքին, երբ կարծում էին, թե «առաջին» ունի իրենցից հետո եկող նման առարկաների և գործողությունների եղանակն ու խնդիրների վրա ներգործելու հմայական հատկություն։

«Առաջին օրվան» դյուրական նշանակությունը վերգրելով գաղափարն է, որ հսկողապետը և դարձնում Ամանորի տոնակատարությունը։

Հայ միջնադարյան ձեռագրերից մեկում Ամանորը դիտվում է մարտ ամիսը և կապվում արարչության սկզբնավորման հետ։ Այստեղից հետևում է, որ մարտ ամիսը դարերի ավանդությամբ Հայաստանում տարվա սկիզբ է համարվել։ Հայտնի է, որ հայկական ամիսների հերթական ցուցակում առաջին ամիսը կոչվում էր Նավասարդ։ Նավասարդ ամսվա հետ էին կապված հին հայերի Նոր տարվան նվիրված տոնակատարությունները։ Հայերը Նոր տարվա տոնի համար ունեին նաեւ «Ամանոր» բառը։

XX դ. սկզբին Հայաստանի մի քանի ազգագրական շրջաններում Նավասարդը դեռ հիշվում էր տոնվում էր որպես Նոր տարվա տոն։ Բայց նրա հետ կապված ծիսական ուրու սովորություններ հիշվում են տակավին։ Դրանցից են հատկապես տների երիկներին շարոց կախելը, նվերներով իրար այցելելը և մանավանդ՝ այդ օրն անպայման հարիսա եփելը։

Հնում հատկապես Բարեկենդան-Ամանորին բոլորն անխտիր, ըստ կարողության, մորթում էին ոչխար, գառ, կով, գանազան թռչուններ, գնում ձկներ։ Տանտիկիները պահած անկյուններից լիարուս հանում էին յուղի կնունները, դավումնան են ձմեռվա համար պատրաստած այլ մթերքներ։ Լայն քաջկում էին մթենախոցների ոռնեքը, եւ մի քանի օր առաջ սկսում էին պատրաստել բարեկենդանյան խորտիկներ։ Մտածում էին, որ Նոր տարվա առաջին օրը պետք է շատ եւ լավ ուտել, որպեսզի ամբողջ տարին այդպես առատ եւ ապահով անցնի, այսինքն՝ այն, ինչ սովորաբար կապված է Նոր տարվա առատ կերտիխման հետ ու ծիսանշանի հավատալիքների հետ։ Դա առաջին օրվա, սկզբնականին հմայական գործողության հավատալիքն է, որով պայմանավորված էին ամբողջ տարվա հաջողություններն ու առատությունը։

Բուն Բարեկենդանին՝ Մեծ պահքին նախորդող վերջին ուտիչ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը կատարվում է մի ծես, որի հնգույն, նախաքրիստոնեական ծագումն աներկբա է։ Ծեսը եկեղեցական պաշտոնական գրականության մեջ անվանում են Փակյալ խորան՝ իբր Մեծ պահքի առաջին օրը փակված խորանով պատարագ մատուցելու սովորույթի առիթով։ Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Օրմանյանը, խորանը փակվել է Մեծ պահքին նախորդող շաբաթ երեկոյան, եւ կիրակի օրն արդեն պատարագը մատուցվում է փակված խորանով։

Քրիստոնեական եկեղեցին յուրահատուկ կերպերով մշակել է Բարեկենդան տոնի նկատմամբ։ Չնդունելով այն որպես տոն՝ դրա վերջին օրը, այսուհետ նայելով, անվանվել է Բուն Բարեկենդան եւ մտել եկեղեցական տոնացույցի մեջ՝ համարվելով Մեծ պահքից առաջ ուտիչ վերջին օրը։ Եկեղեցին փորձում է ցանկալի նոր միաստ ու նշանակություն վերագրել դրան։ Բարեկենդանը համարվում է նախնայորեն որպիստեղի երջանիկ կյանքի իշխատական նվիրված տոն, իսկ տոնին յուրահատուկ շեշտված ուրախությունն ու կերտիխման առատությունը՝ նրանց երջանիկ կյանք վերադարձրելու, վերակրկնելու ցանկություն։


Հայաստանի բոլոր ազգագրական շրջաններում մինչեւ այժմ էլ հիշվում է Բարեկենդանը, հիշվում սիրով՝ որպես ամբողջ տարվա ամենաերջանիկ օրեր։

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվեց իր առաջացումից երեք դար հետո, երբ արդեն հիմնականում ավարտվել էր նրա գաղափարական եւ ծիսապաշտամունքային կողմերի ձեւավորումը։

XIX դ. ժողովրդի մեջ ամենատարածված եւ սովորական անվանումը Նոր տարին է, թեպետ որոշ դեպքերում գործածական էին նաեւ Ամանոր և Նավասարդ անվանումները։ Բացի սրանցից, ազգագրական որոշ շրջաններում զուգահեռ գործածվել է նաեւ Կարդան անվանումը։ Նոր տարվա օրը միայն շնորհավորելու սովորույթը կոչում էին կարդնել, այդ օրն իրար տրվող նվերը՝ կարդնեք, իսկ երգվող երգը՝ կալանոս։

Հայերի մեջ կարդնելու այդ համազգային սովորույթը գրեթե նույն հանդիսավոր ծիսակատարությամբ կրկնվում էր նաեւ Քրիստոսի Շնորհ և Աստվածածնայության տոնին։

Կախե սրկ. ԵՆԳԻՐԱՐՅԱՆ
Գետրոյան հոգեւոր ճեմարանի
2 լսարանի սան



Կարդան աւ. ԺՈՒ. ՏԻԿԵՐԵԱՆ


ԽՐԱԿՏԵ ԵՒ ՕՐԲՆԱԿԸ

Կը ցախմ, տղա՛ս, որ հայր եմ քեզի, Հակոնակ սիրոյս ցաւ տուիր ինձի. Չտուիր խոսքս ու խրատս ու՛շ՝ Հիմա քեզ մարդիկ լը կոչեն ապուշ։ Եթէ այդ խելքով դեռ պիտի շարժիս, Դուն պիտի քերես փուլուով կեանքիս։ Դպրոցը դպրոց անցար շարունակ, Տե՛ս, քեզ տարեկից, դասակից տղաք Յառաջացեր են ուսման մէջ արագ։ Եւ դուն մարդ չեղար, անառաւ տղա՛ս, Այդ ծոյլ ընթացքով միշտ պիտի կարգաւ։ Տարիքը արդեն եղել է քսան, Մեր յոյսերը վառ տեղ մը չիսանաւ։ Եւ ըսի հասակդ Կարդանը Կարմիր Գնդապետ եր երեսու գերեւորի։ - Բայց ըս տարիքիդ Կարդանը Կարմիր, Սպարապետ եր, զօրագուրս ընտիր. - Պատասխան տուաւ տղան ժպտալով։ Երբ օրինակը չենք տար մեր կեանքով, Ի գուր է ուղղել մեկը խրատով։

ԵՐԱԳԱՆՈՒՅՑ

Ինչպես Սը Շնուրիկն, այնպես էլ Սը Չափիկն նախորդող օրը կոչվում է Երագույն, որ նշանակում է Երագ վառել, մոմ վառել։ Սա հնուց եկող սովորություն է։ Այդ օրերին հատուկ արարողակարգով վառվում են տաճարի ջահերն ու կանթեղները եւ ժողովրդին բաժանում վառվող մոմեր, որից հետո մատուցվում է սուրբ եւ անմահ Պատարագ։ Հայաստանյայց Առաքելական Սը Եկեղեցում միայն Սը Շնուրիկն և Սը Հարություն հրազարույցների և Պատարագը երեկոյան մատուցվում։ Նախընտրելի է, որ այդ օրվա ընթացքը պատրաստված լինի ձկնեղենից, կաթնեղենից, բանջարեղենից ու ձկնից։ Եվ ինչպես Սը Գրիգոր Աստվածաբանն է ասում. «Այսօր նախօրեւն ու նախատոնակն է վառվա մեծ լույսի ծագման։ Եվ ինչպես թագավորի զատության ավետիսը [սելով] նրան սիրովներն ուրախաւուն ու պատրաստություն են տեսնում կամ ջախերով ընդառաջ գնում նրան, նույնպես էլ մենք»։

Երագույնից երեկոյն կոչվում է նաեւ խոնձ, որը կարելի է համարել ուտիչի նա-



խատոնակը։ Հնավանդ ժողովրդական սովորության համաձայն՝ Երագույնից երեկոյան մարդիկ այցելում էին միմյանց՝ տոնի ավետիսը տալու եւ այդ առիթով նվերներ փոխանակել։

Ինչպես տեսանք, Հայոց եկեղեցում տար-

վա մեջ միայն երկու անգամ է Երագույնը կատարվում՝ Սը Շնուրիկն եւ Սը Չափիկն նախատոնակներին, քանի որ այս տոների նավակալիքները մեր բնության ռոտացման ու փրկության իշխանակներն են։ Իսկ երեկոյան կատարվող ընթերցումները՝ Երագների ու կարեւորների լույսի երեք, խորհրդանշում են մարգարեների աղոտ ծագումը Արդարության Արեգակի հայտնվելուց առաջ։ Եվ հինը խառնելով նորի հետ՝ տոնախմբում ենք գալիք օրվա իշխատակը։

Մինչ ավարտին կիսանքն հոգեւոր խորախնայելու, վայելում ենք նաեւ մարմնավոր սեղանից, սակայն առանց մսի։ Ո՛չ պահքի մեջ ենք, ո՛չ էլ ամբողջովին՝ ուտիչի, այլ այդ երկուսի միջինի՝ նավակալիքի, որովհետեւ դեռեւս չի սկսվել բուն տոնը, այլ միայն՝ նախատոնակը։ Երագույնից Սը Պատարագից հետո կատարվում է նաեւ Սը Շնուրիկ կամ Սը Հարություն տոնիկը։

Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գետրոյան հոգեւոր ճեմարանի
2 լսարանի սան

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաբաթերթ

Հիմնադիր՝

Մայր Կթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստուխ Ստամբուլյան

Գրական կապակալ՝ 624

Խմբագրության հասցեն՝

Վաղարշապատ, ԲԿ

Հեռախոս՝ (0+231) 54510

Ելադր. տպագր. 28. 12. 2007 թ.

Տպագրանակը՝ 2100 Գինը՝ 50 դրամ